

ՀԱՅ-ՌՈՒ ՍԱԿԱՆ (ՍԼ ԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ԱԼԼԱ ՄՅԵՐԻ ՀԱՐՈՒ ԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ՎԵՐԼՈՒՄԻ ԹՅԱՆ և ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒ ԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼ ԱԳՈՐՃՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒ Մ (ԽԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒ ԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՏԵՆԱԿՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Ը.00.03 -«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությունը տնտեսագիտությունը թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար
Տնտեսագիտություն դոկտոր, պրոֆեսոր
Ա.Վ.Մաթևոսյան

ԵՐԵՎԱՆ 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ	2
ԳԼՈՒԽ1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ	9
1.1. Կազմակերպության նկարագրի ֆինանսական կայունության և տնտեսական բովանդակությանը և դրավրա ազդող գործոնները	9
1.2. Ֆինանսական կայունության վերլուծության և կանխատեսման մեթոդները	26
1.3. Արտադրական կազմակերպության նկարագրի ֆինանսական կայունության վերահսկողության ժամանակակից մոտեցումները	33
ԳԼՈՒԽ2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԽԻՉՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	48
2.1. Ֆինանսական կայունության գործոնային վերլուծությանը և լուծման ենթակախնդիրները	48
2.2. Ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համեմատական վերլուծությանը	70
2.3. Ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցության խնդիրները խմիչքների արտադրող կազմակերպության նկարագրի	81
ԳԼՈՒԽ3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ	102
3.1. Ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցումը խմիչքների արտադրող ՀՀ կազմակերպության նկարագրի	102
3.2. Ֆինանսական կայունության ներքին վերահսկողության վարկանշման վրահիմնված մոտեցումը	117
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	131
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	137
ՀԱՎԵԼՎԱԾ	146

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Յետադուտության թեմայի արդիականությունը: Տնտեսավարման շուկայական հարաբերությունների իրացումը հայրենական արտադրական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռեց ինքնուրույն ավանավորել արտադրական և ֆինանսական միջոցները, իրականացնել ինչպես սեփական կազմակերպության, այնպես էլ բիզնեսի գծով գործընկեր կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծություններ: Մեծ թվով կազմակերպություններ այդ պայմաններում բավեցին ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդրի հետ՝ նպատակ ունենալով նվազեցնել ու ֆինանսական անկայուն վիճակում հայտնվելու հավանականությունը: Նշված հիմնախնդրի հետադուտության նշանակությունը և դրա լուծումների անհրաժեշտությունը Էականորեն բարձրացավ 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի և մասնավորապես ՀՀ-ում 2009 և 2014 թթ. տեղի ունեցած ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքային տատանումների հետևանքներով:

Ասրանքների պահանջարկի անկումը, ֆինանսական միջոցների պակասորդը, հայրենական արժույթի՝ դրամի արժեզրկումը կազմակերպություններին դրեցին գոյատևման խնդրի առջև՝ հանգեցնելով արտադրության ծավալների և աշխատողների հարկադրողական կրճատման:

Արտերկրյա փորձը ցույց է տալիս, որ նման պայմաններում նույնիսկ խոշոր կազմակերպությունների գոյատևումը հնարավոր է առանց պետական աջակցության նպատակային ֆինանսավորման ձևի կիրառման:

Կազմակերպությունների ֆինանսական կայունության ամրապնդման և բարձրացման առնչվող հիմնախնդիրներն իրենց լուծումներն են ստացել ֆինանսական կառավարման տեսական և կիրառական մոտեցումներով:

Ֆինանսական կայունության գնահատման հիմնախնդիրները նույնպես դասվում են ոչ միայն ֆինանսական այլ և ընդհանուր տնտեսական առավել կարևոր հիմնախնդիրների թվին, քանի որ ֆինանսական ցածր կայունությունը կարող է հանգեցնել ոչ միայն կազմակերպության արտադրության զարգացման, այլ և ընթացիկ

գործունեության ֆինանսավորման համար միջոցների սղության, անվճարունակության, իսկ վատագույն դեպքում՝ նաև սնանկացման: Միաժամանակ ֆինանսական բարձր կայուն վիճակը պաշարների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքի տեսակյունից փաստում է տնտեսվարման ցածր արդյունավետությունը: Ուստի կազմակերպության համար ֆինանսական կայունության սահմանների որոշումը նույնպես դասվում է առավել կարևոր և հրատապ լուծումներ պահանջող տնտեսական խնդիրների թվին:

Չնայած հայ տնտեսագետ գիտնականները մեծ թվով հրապարակումներ են նվիրել կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծության հարցերին, կարծում ենք, որ դեռևս համակարգված չեն և տարբեր են նաև նրանց կողմից կիրառված վերլուծության մեթոդները: Ուստի անհրաժեշտ է մշակել ճյուղային կտրվածքով ցուցանիշների միասնական համակարգ, որոնք հնարավորություն կընձեռեն բավարարել կազմակերպության ֆինանսական կայունության վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկատվության նկատմամբ առկա պահանջմունքը:

Կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատման, վերլուծության և կանխատեսման, այդ թվում նաև ներքին վերահսկողության նոր մոտեցումների և գործիքների կիրառման անհրաժեշտությունն էլ պայմանավորել է ընտրված թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը:

Կազմակերպության ֆինանսական կայունության հիմնախնդրի ուսումնասիրությամբ զբաղվել են ինչպես արտերկրյա, այնպես էլ հայրենական մեծ թվով հետազոտողներ: Կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծությանը, այդ թվում ֆինանսական կայունության հիմնախնդիրներին արտերկրյա հեղինակներից իրենց աշխատություններում անդրադարձել են Ա.Ճերեմետը, Մ.Բականովը, Ի.Բլանկը, Վ.Բոչարովը, Գ.Կապանաձեն, Մ.Կրեյնիևան և այլք: Հայ հետազոտողներից կազմակերպությունների ֆինանսական կայունության վերլուծության և գնահատման հիմնախնդիրներին անդրադարձել են Լ. Սահակյանը, Ռ. Միքայելյանը, Թ. Ստեփանյանը, պրոֆեսորներ Ա. Բայադյանը, Ա. Մաթևոսյանը: Նշվածով հարևներ՝ կարծում ենք, որ վերափոխվող տնտեսական հարաբերությունների

պայ մանկերում կազմակերպության ֆինանսական կայունության տեսական և գործնական նշանակությունն ունեցող հարցերը դեռևս շարունակում են մնալ հրատապ քննարկման նյութ: Հայրենական արտադրական կազմակերպությունները միշտ էլ ունեն ֆինանսական կառավարման արտերկրյա նոր մոտեցումների տեղայնացման կարիք: Միաժամանակ կարծում ենք, որ ֆինանսական կայունության ներքին վերահսկողության հարցերին տրվող լուծումները սակավաթիվ են. այս ուղղությամբ ևս խիստ անհրաժեշտ է մշակել և կիրառել նոր մոտեցումներ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության վերլուծության մեթոդների և վերահսկողության մոտեցումների կատարելագործումը: Դրված նպատակին հասնելու համար մեր կողմից կարևորվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել կազմակերպության ֆինանսական կայունության տնտեսագիտական բովանդակությունը, բնութագրական մոտեցումները և ներկա փուլում խմիչքներ արտադրող կազմակերպությունների տեսանկյունից դասկարգել առավել էական գործոնները,

- պարզաբանել ֆինանսական կայունության վերլուծության և կանխատեսման մեթոդները,

- ուսումնասիրել արտադրական կազմակերպություններում ֆինանսական կայունության վերահսկողության ժամանակակից մոտեցումները

- խմիչքներ արտադրող կազմակերպություններում ֆինանսական կայունության գործոնային վերլուծության միջոցով վեր հանել այդ գործընթացում լուծման ենթակա խնդիրները,

- իրականացնել հետազոտվող կազմակերպություններում ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համեմատական վերլուծությունն,

- քննարկել խմիչքներ արտադրող կազմակերպություններում ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցության խնդիրը և մշակել գնահատման նոր մոտեցում,

- խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների

փաստացի տվյալների հիման վրա որոշել վարկանշման և ներքին վերահսկողության նպատակով կիրառվող ցուցանիշների սահմանային միջակայքերը,

- առաջարկել ֆինանսական կայունության ներքին վերահսկողության կատարելագործման ուղիներ,

- մշակել վարկանշման վրահիմնված ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպության ներքին ֆինանսական կայունության վերլուծության մոտեցումները, գործիքները և վերահսկողության համակարգերն են: Հետազոտության առարկան տնտեսական մեխանիզմի վերափոխումներին համահունչ ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծության, կանխատեսման և վերահսկողության մոտեցումների կատարելագործմանն ուղղված հիմնահարցերն են:

Հետազոտության տեսալեռնական հիմքերը և տեղեկատվության ապահովումը: Ատենախոսության համար տեսական - մեթոդաբանական ելակետ են ծառայել հայ և արտերկրյա հեղինակների գիտական հետազոտություններն ու մեթոդաբանական բնույթի աշխատանքները:

Հետազոտության հիմքում դրվել են \$ՄՅՍ-1-ը, ՀՀ կառավարության այս ոլորտին առնչվող համապատասխան որոշումները, միջազգային այլ կազմակերպությունների կազմակերպած գիտաժողովների, սեմինարների նյութերը և նրանց կողմից մշակված մեթոդական ցուցումները: Հետազոտության համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունն ընդգրկում է Հայաստանի վիճակագրական տարեգրքերից և հետազոտված խմիչքների արտադրող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններից վերցված նյութերը:

Կիրառվել են ուսումնասիրության հաշվապահական հաշվառման, տնտեսական գործունեության վերլուծության, վիճակագրական, տնտեսամաթեմատիկական մոդելավորման, կանխատեսման մեթոդներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորոշյալը: Ատենախոսությունում հիմնվելով ՀՀ խմիչքների արտադրական կազմակերպությունների գործունեության

արդյունքների վրա առաջարկվել են ճյուղի կազմակերպությանների ֆինանսական կայունության վերլուծության, կանխատեսման և վերահսկողության կատարելագործման ուղիներ: Հետազոտության ընթացքում ձեռք են բերվել մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են.

- Առաջարկվել է ֆինանսական կայունության գնահատման համալիր մոտեցում ըստ գործոնների, որի կիրառմամբ խմիչքներ արտադրող կազմակերպությանների համար գնահատվել են ֆինանսական վիճակի վրա կապիտալ ով ապահովվածության, վճարունակության, իրացվելիության, գործարար ակտիվության և շահութաբերության ազդեցության աստիճանները:

- Առաջարկվել են ՀՀ ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպությանների ֆինանսական կայունության ներքին վերահսկողության սցենարային լուծումներ:

- Մշակվել է ֆինանսական կայունության և վարկունակության կորելացիոն կապի վրա հիմնված մոտեցում, որի շրջանակներում դասակարգվել են ռեսուրսների օգտագործման ինտենսիվության փուլերը և գնահատվել է ռեսուրսների օգտագործման ակտիվությունից կախված վարկային ռիսկը:

- Բանկային համակարգում կիրառվող վարկանշման մոտեցումներին որպես այլընտրանք, մշակվել է ֆինանսական կայունության ներքին վերահսկողության մոտեցում, հիմնվելով՝ կապիտալի ներգրավման, հաշվեկշռի իրացվելիության և գործառնական կառավարման ընթացքում առաջացող ռիսկերի վրա:

Արեւախոտության տեսական և կիրառական նշանակությունը:

Կատարված հետազոտությունը կարևոր քայլ է ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպությանների ֆինանսական կայունության վերլուծության, գնահատման և ներքին վերահսկողության բարելավման ուղղությամբ: Հետազոտության ընթացքում մշակվել են և գործնականում կիրառվել են ֆինանսական կայունության ներքին վերահսկողության նոր մոտեցումներ:

Կառուցված ֆինանսական կայունության գործոնային գնահատման համալիր մոտեցումը լայն ընտրանքի դեպքում հնարավորություն է տալիս վեր հանել ճյուղային կտրվածքով կազմակերպությանների ֆինանսական կայունությանը թուլացնող

Էական գործոնները և միջոցներ ձեռնարկել ներքին վերահսկողության արդյունավետությանը բարձրացնելու ուղղությամբ:

Վերլուծական մեթոդների կատարելագործման առումով կարևորում ենք ֆինանսական կայունության և վարկունակության փոխկապակցությունը գնահատող, իսկ ներքին վերահսկողության աշխատանքերի որակի բարձրացման տեսանկյունից վարկանշման վրա հիմնված ֆինանսական կայունության մոտեցումները:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և

հրապարակումները: Հետազոտության դրույթները քննարկվել են ՀՊՏՀ «Կառավարչական հաշվառման ու աուդիտի» ամբիոնի նիստում (արձանագրություն թիվ 12), ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում, գործարարների համաժողովներում, կարևորագույն արդյունքները ներկայացվել են հետազոտված խմիչքներ արտադրող կազմակերպություններ: Հետազոտության մի շարք արդյունքներ ներդրվել են «ՍԻՍ ՆԱՏՈՒՐԱԼ» ՓԲԸ-ում և նշանակալիորեն բարելավել են կազմակերպության ֆինանսական կայունության ներքին վերահսկողության գործընթացը:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական 6 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 133 էջ՝ առանց հավելվածների:

ԳԼՈՒԽ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Կազմակերպության ու ներքին ֆինանսական կայունության տնտեսական բովանդակությունը և դրավորա ազդող գործոնները

Կազմակերպության ֆինանսական կայունությունը համարվում է ազգային տնտեսական համակարգի արդյունավետ զարգացման կարևոր պայմանը: Երկրի և նրա տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական կայունության տեսական և կիրառական բնույթի հիմնախնդիրների նշանակությունը որոշվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների, ներքին և արտաքին գործոնների ազդեցության հանրագումարի արդյունքում: Այսպես, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում էականորեն բարձրացավ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական կայունության նշանակությունը: 2008թ. համաշխարհային ճգնաժամը ցույց տվեց հայրենական տնտեսության անկայունությունը և համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող խորքային փոփոխություններից կախվածությունը: Հարկ է նշել, որ կազմակերպությունների ֆինանսական կայունության պարզաբանմանը նվիրվել են արևմտյան¹ և հայրենական տնտեսագետ գիտնականների մեծ թվով հետազոտություններ և գիտական հրատարակումներ²: Սակայն, որոշ հարցերի վերաբերյալ առկա չէ միասնական տեսակետ, երբեմն ձևակերպումներում հանդիպում են հակասություններ: Միաժամանակ նշենք, որ Տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում կազմակերպության ռազմավարական նպատակների ձեռքբերումը, ֆինանսական ներուժի և հնարավորությունների կանխատեսումը, կայուն ֆինանսատնտեսական գործունեության ապահովումը հնարավոր չէ առանց

¹ Григорьев, В.В. Оценка предприятия: теория и практика. / В.В. Григорьев. – М.: НОРМА-ИНФРА-М, 2006. 320 с.
Валдайцев, С.В. Оценка бизнеса и управление стоимостью предприятия: Учебное пособие для вузов. / С.В. Валдайцев. – GUMER-INFO, 2007. 720 с

² Մելքումյան Մ. և ուրիշներ. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Չանգակ-97, ՍՊԸ, Երևան 2014թ., 512 էջ : Матевосян А.В. „Проблема финансовой устойчивости и пути развития МСП в Республике Армения“, Актуальные вопросы экономических наук: сборник материалов XXII Международной научно-практической конференции: в 2-х частях. Часть 2/Под общ. Ред. Ж. А. Мингалевой, С. С. Чернова.-Новосибирск: Издательство НГТУ, 2011. ст.181-186.

հստակ բնորոշել ու կազմակերպության ֆինանսական կայունությունն հասկացողությունը:

Ռուսական դպրոցի տնտեսագետ գիտնականներից Ա. Շերեմետի և Մ. Բականովի տեսակետի համաձայն՝ ֆինանսական կայունությունը դրսևորվում է կազմակերպության վճարունակությունը, իրացվելիությունը, շահույթաբերությունը, ֆինանսական ռեսուրսների և գույքի օգտագործման արդյունավետությունը, հոսսավիությունը և մրցունակությունը³: Նրանք ընդգծում են ֆինանսական վիճակի ազդեցությունը կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների վրա, մասնավորապես մատակարարների հետ հարաբերություններում՝ նյութերի և տեխնիկայի դիմաց վճարումներն իրականացնելու կարողությունը, ֆինանսավարկային կազմակերպությունների հետ հարաբերություններում՝ վարկը մարելու կարողությունը, պետական մարմինների հետ հարաբերություններում՝ հարկային պարտավորությունների կատարումը, վարձու աշխատողների և ծառայողների հետ հարաբերություններում՝ աշխատավարձի գծով վճարումները:

Մեկ այլ տեսակետում Ա. Շերեմետը և Ե. Նեգաշևը տարանջատել են ֆինանսական վիճակի չորս տեսակներ՝ բացարձակ կայունություն, բնական կայունություն, անկայուն վիճակ և ճգնաժամային վիճակ⁴:

Բնութագրելով կազմակերպության ֆինանսական վիճակի էությունը՝ Գ. Սավիցկայան իր հետազոտություններում շեշտադրել է կապիտալի վիճակը դրա շրջապատելի գործընթացում և ժամանակի ֆիկսված փուլում տնտեսավարող սուբյեկտի կողմից իր գործունեությունը ֆինանսավորելու կարողությունը⁵:

Գ. Սավիցկայան⁶ և Օ. Գրիշենկոն⁷ իրենց տեսակետում ֆինանսական վիճակը բնորոշել են որպես կազմակերպության ինքնաֆինանսավորման կարողություն: Ընդ որում, Օ. Գրիշենկոն ֆինանսական վիճակի հիմնական բնութագրիչներ է դիտել ֆինանսական

³ Баканов М.И., Шеремет А.Д. Теория экономического анализа. Учебник. 4-е изд., доп и перераб. М.: Финансы и статистика, 2002. 416 с.

⁴ Шеремет А.Д., Негашев Е.В. Методика финансового анализа деятельности коммерческих организаций. 2-е изд., перераб. и доп. — М.: ИНФРА-М, 2008. ст. 155-158.

⁵ Экономический анализ: Учебник / Г.В. Савицкая. - 14-е изд., перераб. и доп. - М.: НИЦ ИНФРА-М, 2013. ст. 122-128.

⁶ Савицкая, Г.В. Теория анализа хозяйственной деятельности. / Г.В. Савицкая. - М.: Инфра-М, 2007. ст. 251-252.

⁷ Грищенко О.В. Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности предприятия: Учебное пособие. / О.В. Грищенко. - Таганрог: Изд-во ТРТУ, 2007.

ռեսուրսներով ապահովվածություները, դրանց ձևավորումը, տեղաբաշխումը և օգտագործումը, վճարունակությունն ու ֆինանսական կայունությունը: Այս հետազոտողի կողմից տարբերակվել են ֆինանսական վիճակի երեք տեսակ՝ կայուն, անկայուն և ճգնաժամային⁸:

Որոշ հետազոտություններում կայունությունը բնութագրվում է որպես ծախսերի և կորուստների ռիսկից դուրս հաստատուն վիճակ, իսկ համակարգի կայունությունը, որպես նախկին վիճակի բերելու կարողություն, որն էական նշանակություն է ստանում կոորպորատիվ կառավարման շրջանակներում⁹:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ տարբերակվում են ֆինանսական վիճակ և ֆինանսական կայունություն հասկացությունները ելնելով երկու հիմնարար մոտեցումներից¹⁰.

1. կայունությունը վիճակի բնութագրիչ է, ուստի վերլուծելով ֆինանսական վիճակը՝ իրականացվում է նաև ֆինանսական կայունության վերլուծություն,
2. կազմակերպության ֆինանսական կայունությունը ընդունվում է ընդհանրացնող բնութագրիչ, իսկ ֆինանսական վիճակը միայն կայունության դրսևորման բաղադրիչ:

Ծուկայական տնտեսության պայմաններում ֆինանսական կայունության ապահովումը ձեռք է բերել կարևոր նշանակություն, ինչն էլ պայմանավորում է հայ և արտերկրյա հետազոտող գիտնականների կողմից այդ հիմնախնդրի նկատմամբ բարձր հետաքրքրությունը: Չնայած տվյալ հիմնախնդրի վերաբերյալ մեծաթիվ հրապարակումներին՝ դեռևս մեկ միասնական տեսակետ կազմակերպության ֆինանսական կայունության բնութագրման վերաբերյալ առկա չէ: Մեր կողմից իրականացված տեսական մոտեցումների վերլուծության արդյունքներով կարևոր նշանակություն են տրվել ստորև ներկայացվող տեսակետներին:

Առաջին մոտեցմանը հարող հետազոտողների կողմից

⁸ Грищенко О.В. Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности предприятия: Учебное пособие. / О.В. Грищенко. - Таганрог: Изд-во ТРТУ, 2007. ст. 52-68.

⁹ Хайруллин, А.Н. Факторы корпоративной устойчивости / А.Н. Хайруллин, В.Г. Тимирязов, Л.М. Рабинович -- Казань: Татгилмат ИЭУиП, 2006. 43 с.

¹⁰ Горская Н. В. Сравнительный анализ методик оценки финансовой устойчивости // Молодой ученый. .2015. №10.2. ст. 106-108.

կազմակերպության ֆինանսական կայունությունը հասկացությունը հիմնվել է ֆինանսական վիճակի հիմնական ցուցանիշների՝ վճարունակություն, իրացվելիություն, շահութաբերություն, վարկունակություն, օգտագործման վրա: Յենց այդ պատճառով այս մոտեցման մեջ ներառվող տեսակետների հեղինակները մեծ մասամբ ֆինանսական կայունությունը բնորոշումը նույնացրել են վճարունակությունը հասկացության հետ: Այսպես՝ Մ.Աբրյուտինան և Ա.Գրաչևն իրենց տեսակետում ֆինանսական կայունությունը կապել են վճարունակության հետ և լիարժեք չեն զբաղվել ֆինանսական վիճակի ու կայունության փոխադարձ կապերի հետազոտությամբ: Ըստ այս հետազոտողների՝ կազմակերպության ֆինանսական կայունությունը երաշխավորված վճարունակությունը, շուկայական համակարգված քի պատահականություններից և գործընկերների վարքագծից անկախությունն է¹¹:

Նույն խմբում ներառված հետազոտողներից Ն.Դևան¹², Մ Ֆեդոտովան և Լ.Բելիխը¹³ ֆինանսական կայունությունը տակընկալել են կազմակերպության որոշակի վիճակ, որը երաշխավորում է երկարաժամկետ փողի ու վճարունակությունը:

Իրենց համառոտ տեսակետում Ն. Սելեզնևան և Ա.Իոնովան կարծում են, որ ֆինանսական կայունությունը կազմակերպության ակտիվների այնպիսի վիճակ է, որը երաշխավորում է կազմակերպության մշտական վճարունակությունը¹⁴: Մեր կարծիքով, այս տեսակետում նպատակահարմար է օգտագործել ոչ թե ակտիվների վիճակը, այլ հենց դրանց ձևավորման աղբյուրներով ապահովվածությունը:

Ռուս հետազոտողներից Ա. Ֆիլիմոնենկովը ֆինանսական կայունությունը բնորոշել է որպես կազմակերպության այնպիսի վիճակ, որի դեպքում նրա գույքի մեծությունը բավարար է պարտավորությունները մարելու համար, այսինքն

¹¹ Анализ финансово-экономической деятельности предприятий [Текст] : учебно-практическое пособие / М. С. Абрютин, А. В. Грачев. - 2-е изд., испр. ... [Текст] : учеб. пособие / М. С. Абрютин. - Москва: Дело и сервис, 2000. ст. 51-52.

¹² Деева Н. М. Финансовый анализ / Н. М. Деева, О. І. Дедіков. – К. : Центр учбової літератури, 2007. ст. 61-62.

¹³ Бельх Л. П. Реструктуризация предприятия / Л. П. Бельх, М. А. Федотова. – М. : ЮНИТИ, 2004. ст. 53-54.

¹⁴ Селезнева Н. Н. Финансовый анализ. Управление финансами / Н. Н. Селезнева, А. Ф. Ионова. – М. : ЮНИТИ, 2003. С. 311-315.

կազմակերպությունը համարվում է վճարունակ¹⁵:

Վ.Բորիսովան իր տեսակետում պնդում է, որ ֆինանսական կայունությունը կազմակերպության հաշիվների որոշակի վիճակ է, որը կազմակերպությանը երաշխավորում է մշտական վճարունակություն¹⁶:

Իրենց տեսակետներում Ն.Ռադիոնովան¹⁷ և Ի.Բլանկը¹⁸ նույնպես հակված են այն ուղղությանը, ըստ որի՝ կազմակերպության ֆինանսական կայունությունն այնպիսի ֆինանսատնտեսական վիճակ է, որի դեպքում կազմակերպությունը համարվում է իրացվելի, վճարունակ և ունենում է բնականոն գործունեության համար բավարար ծավալի միջոցներ:

Մեր կարծիքով, առաջին խմբում ներառված բոլոր այն տեսակետներում, որոնցում ֆինանսական կայունությունը հավասարեցվում է վճարունակությանը, իրացվելիությանը չեն կարող ամբողջական համարվել, քանի որ ֆինանսական կայունությունը առավել լայն հասկացություն է, որը փոխկապակցում է կազմակերպության վճարունակության և հաշվեկշռի իրացվելիության ֆինանսական կառավարման գործընթացը մեկ ամբողջական շղթայում: Հատկանշական է, որ կարճաժամկետ կտրվածքում իրացվելիության, վճարունակության և շահույթաբերության ցուցանիշների վիճակի բարելավումը ոչ միշտ է ցույց տալիս կազմակերպության ֆինանսական կայունության բարելավումը, քանի որ երկարաժամկետ հեռանկարում շահույթի ավելացումը մեծ մասամբ հանգեցնում է ռիսկերի բարձրացմանը, որն էլ իր հետևանքներն է ունենում ֆինանսական կայունության վրա:

Երկրորդ մոտեցումը հիմնված է կազմակերպության կապիտալի կառուցվածքի և մեծության հետազոտության վրա: Այս մոտեցմանը հարող հետազոտողներից են Մ.Բականովը, Մ Մելնիկը, Ա. Շերեմետը, Գ. Սալիցկայան, Վ. Չանչենկոն, Յու. Կոպչակը, Ա.Սայֆուլինը, Ս. Չուպրովը և այլք:

¹⁵ Філімоненков О. С. Фінанси підприємства / О. С. Філімоненков. – К. : Вид-во «Ніка-Центр», 2002. . ст. 303-305/

¹⁶ Борисова В. А. Методологічні основи аналізу фінансового стану підприємств агропромислового виробництва / В. А. Борисова // Фінанси України. – 2000. – № 10. ст. 66-68.

¹⁷ Родионова В. М. Финансовая устойчивость предприятия в условиях инфляции / В. М. Родионова, М. А. Федотова. – М. : Перспектива. – 1995. ст. 15.

¹⁸ Бланк И.А. Основы финансового менеджмента. Том 2 DJVU ... : Эльга, Ника-Центр, 2007. ст. 475.

Նշված հեղինակներից մասնավորապես Մ Բականովը և Ա.Շերեմետն իրենց համատեղ տեսակետում¹⁹ պնդում են, որ կազմակերպության ֆինանսական կայունությունը գնահատվում է վճարունակության մակարդակով և սեփական ընթացիկ ակտիվների ապահովվածությամբ:

Մ. Բականովի, Մ. Մելնիկի և Ա. Շերեմետի համատեղ տեսակետում²⁰ ֆինանսական վիճակը համարվել է կայուն, եթե կազմակերպությունը տնօրինում է կապիտալի բավարար ծավալ, որպեսզի ապահովի արտադրանքի արտադրության և իրացման հետ կապված սեփական գործունեության անընդհատությունը, ինչպես նաև ամբողջությամբ և ժամանակին կատարելու աշխատակիցների նկատմամբ աշխատավարձ վճարելու իր պարտավորությունները, բյուջեի հանդեպ հարկային վճարումները, մատակարարների հանդեպ վճարային պարտավորությունները, ձևավորել ոչ ընթացիկ ակտիվների նորացման համար միջոցներ:

Մեկ այլ տեսակետի համաձայն²¹ (Ա.Շերեմետ և Ռ. Սայֆուլին)՝ ֆինանսական վիճակը բնութագրում է կազմակերպության միջոցների բաշխումն ու օգտագործումը: Այն պայմանավորված է ֆինանսական պլանի կատարման աստիճանով և շահույթի ու այլ աղբյուրների հաշվին սեփական միջոցները համալրելու ունակությամբ և կապիտալի շրջապտույտի արագությամբ: Գ.Սավիցկայան իր տեսակետում²² նշում է, որ ֆինանսական կայունությունն արտացոլվում է կազմակերպության կապիտալի որակում, ինչպես նաև դրա շրջապտույտում և աճելու կարողությամբ: Ֆինանսական կայունության արտաքին դրսևորում, որն անընդհատ փոփոխվում է կազմակերպության գործունեությամբ պայմանավորված կապիտալի շրջապտույտում, ըստ Գ. Սավիցկայայի համարվում է վճարունակությունը: Ելնելով ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից՝ այս հեղինակն առաջարկել է կազմակերպության ֆինանսական վիճակի կայուն և անկայուն և վտանգավոր տեսակները:

¹⁹ Баканов М.И., Шеремет А.Д. Теория экономического анализа. Учебник. 4-е издание. М.: Финансы и статистика, 2001. ст. 28-30.

²⁰ Баканов М.И., Мельник М.В., Шеремет А.Д. Теория экономического анализа. Учебник. 5-е издание, перераб. и доп. М.: ФиС, 2007. ст. 146-152.

²¹ Шеремет А.Д., Сайфулин Р.С. Финансы предприятий. М.: ИНФРА-М, 1998. ст. 287-288.

²² Савицкая Г.В. Анализ хозяйственной деятельности предприятия. М.: Инфра-М, 2009. ст. 172-174.

Մ. Կրեյնինայի տեսակետի²³ համաձայն՝ ֆինանսական կայունությունը բնութագրում է կազմակերպության կայուն ֆինանսական վիճակը, որը կախված է միջոցների ձևավորման աղբյուրների կազմում սեփական կապիտալի մասնաբաժնից: Մասնավորապես, փոխառու կապիտալը կազմակերպության կողմից օգտագործվում է միայն այն մասնաչափով, որի մասով կազմակերպությունը կարող է ժամանակին վերադարձնել, իսկ ընթացիկ պարտավորությունները չպետք է գերազանցեն ընթացիկ ակտիվների բաղադրիչներից պաշարների և անավարտ արտադրության մնացորդների հանրագումարը:

Ռուսական հեղինակներից Ս.Չուրովն իր տեսակետում²⁴ կարևորել է կազմակերպության ֆինանսական կայունության արդյունավետ վերահսկողության մեխանիզմների կիրառման անհրաժեշտությունը և հիմնական ուղղություններից է համարել ֆինանսական կայունությունը բնութագրող գործակիցների նորմատիվային նշանակությունների մշակումը:

Քննարկված տեսակետներում էական դեր չի տրվել կազմակերպության կապիտալի վերահսկողության հարցերին, որն էական դեր ունի ֆինանսական կայունության ապահովման գործում: Ուստի, մեր կարծիքով, կազմակերպության կապիտալի շրջապտույտից կախված ֆինանսական կայունության պահպանման ինդիկորը արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացվող սկզբունքներին՝

- փոխառու կապիտալի ներգրավման ռացիոնալ քաղաքականության իրականացում, որը մշակվում է ֆինանսական լծակի արդյունավետության տեսությունների հիման վրա՝ նպատակ ունենալով կանխարգելել սնանկացման հավանական վտանգը,
- կապիտալի անհրաժեշտ և բավարար շահույթաբերության մակարդակի ապահովում, ինչը ենթադրում է, որ տնտեսական շահույթաբերության մակարդակը պետք է ապահովվի սեփական կապիտալի այն մասնաբաժնով ավելացմամբ, որն անհրաժեշտ է կայուն գործունեության համար:

²³ Крейнина М. Н. Анализ финансовой деятельности предприятия для совершенствования бизнеса: учеб. пособие / Учеб.-методол. центр при М-ве РФ по налогам и сборам. – М.: УМЦ, 2002. ст. 31-33.

²⁴ Чупров С. Повышение эффективности управления устойчивостью предприятий // Проблемы теории и практики управления. 2004. N 4. ст. 114-118.

Իր հերթին կազմակերպության կայուն գործունեության պայմաններից ներկայից լուծվելու կարևորում ենք հետևյալները՝

1. հիմնական միջոցների նորացումը և երկարաժամկետ ֆինանսական ներդրումները,
2. սեփական ընթացիկ ակտիվների համալրումը, ինչը բավարար կլինի ընթացիկ իրացվելիության և վճարունակության պահպանման համար,
3. կազմակերպության վարձու աշխատողների նյութական խթանումը,
4. բաժնետիրական ընկերությունների դեպքում բաժնետերերի շահերը բավարարող շահաբաժինների վճարում:

Հարկ է նշել, որ գործող կապիտալը նախընտրելի մակարդակում պահպանելու սկզբունքը պահանջում է սեփական և փոխառում միջոցների միջև որոշակի հարաբերակցության սահմանում և դրանց ռացիոնալ տեղաբաշխում, իսկ կապիտալի դինամիկ գործունեության սկզբունքը նախատեսում է շրջապտույտի բոլոր փուլերում բավարար արագության ապահովում: Հակառակ դեպքում կազմակերպությունը սկսում է կորցնել իրացվելիությունը, իսկ դրանով պայմանավորված նվազում են նաև ֆինանսական կայունությունը և ֆինանսական անկախությունը:

Արտադրական կազմակերպությունների ֆինանսական կայունություն վերլուծության, գնահատման և բարելավման խնդիրներին անդրադարձել են նաև հայ տնտեսագետ գիտնականները: Ֆինանսական կայունության ընդհանուր բնութագրության, գնահատման ցուցանիշներին և բարելավման խնդիրներին անդրադարձել են պրոֆեսորներ Ա. Յ. Բայադյանը²⁵, Ա. Վ. Մաթևոսյանը²⁶, Յ. Գ. Մնացականյանը²⁷, տնտեսագիտության թեկնածուներ Կ. Ռ. Արմենակյանը²⁸, Լ. Մ. Հարությունյանը²⁹, Թ. Ա. Ստեփանյանն³⁰ և այլք,

²⁵Բայադյան Ա. Յ.՝ «Ձեռնարկությունների ֆինանսական դրություն գնահատումը», Եր. Ասոդիկ, 2002, 298 էջ:

²⁶Ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ արդյունաբերական կազմակերպություններում, Աշոտ Մաթևոսյան, Եր.: Ռսկան Երևանցի, 2011, 368 էջ:

²⁷Մնացականյան Յ. Գ. Առողջիտրական գործունեության զարգացման հիմնախնդիրները լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, տնտեսագիտության դոկտորի հացյման ատենախոսություն, Երևան 2012, 340 էջ:

²⁸Արմենակյան Կ.՝ Ռ. Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության և կանխատեսման հիմնախնդիրները՝ (ՀՀ օրինակով), տնտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2005, 149 էջ,

որոնք ժամանակի պահանջներին համահունչ առաջարկել են քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ արդյունավետ և ուժեղ մեթոդներ: Եթե պրոֆեսոր Ա. Յ. Բայարյանն³¹ առավել շեշտադրել է ֆինանսական կայունության գնահատման ցուցանիշների և ավագույն համախմբերի փնտրման խնդիրները, ապա պրոֆեսոր Ա. Վ. Մաթևոսյանը³² հիմնական շեշտադրումը կատարել է գործնական գնահատման հիմնախնդիրների և կանխատեսման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ: Պրոֆեսոր Յ. Գ. Մնացականյանի կողմից³³ առավել կարևորվել են աուդիտի շրջանակներում ֆինանսական վերահսկողության խնդիրները: Ինչ վերաբերում է հայ այլ հետազոտողների տեսակետներին, ապա մասնավորապես Լ. Մ. Յարուբյանյանն³⁴ իր ատենախոսության ունեցած ֆինանսական կայունության հարցերը քննարկել է սնանկացման կանխարգելման և առողջացման հայ ցեղակարգային դրույթների համատեքստում:

Կ.Ռ.Արմենակյանի կողմից³⁵ առավել շեշտադրվել են ֆինանսական կայունության գնահատման խնդիրները և դրանց վերաբերյալ նորմատիվային նշանակությանն առնչվող և ուժեղ մեթոդները:

Թ. Ա. Ստեփանյանն իր ատենախոսության ունեցած հանգել այն տեսակետին, որ «...ֆինանսական կայունությանը ձևավորվում է արտադրատնտեսական գործընթացի բոլոր փուլերում և համարվում է տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր

²⁹ Յարուբյանյան Լ.Մ. Յ. Յ. Արմենակյանի արտադրության կազմակերպության ունեցած անվճարունակության և սնանկացման հիմնախնդիրները, տնտ. թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման ատենախոսության ունեցած, Երևան 2011թ., 141 էջ:

³⁰ Ստեփանյան Թ. Ա. Ֆինանսական կայունության գնահատման և բարելավման հիմնախնդիրները (Յ. Գ. Մնացականի արտադրության կազմակերպության ունեցած օրինակով), տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման ատենախոսության ունեցած, Երևան 2013թ., 201 էջ:

³¹ Բայարյան Ա. Յ. 'Ձեռնարկության ունեցած ֆինանսական դրության գնահատումը', Եր. Ասողիկ, 2002, էջեր 24-37:

³² Ֆինանսական կառավարման հիմնախնդիրները Յ. Գ. Մնացականի արտադրության կազմակերպության ունեցած ունեցած -մ./Աշոտ Մաթևոսյան, Եր.: Ոսկան Երևանցի, 2011, էջեր 28-43 և 207.232:

³³ Մնացականյան Յ. Գ. Աուդիտորական գործունեության զարգացման հիմնախնդիրների և ունեցած ուղիները Յ. Գ. Մնացականի ատենախոսության ունեցած, Երևան 2012, էջեր 43-59:

³⁴ Յարուբյանյան Լ.Մ. Յ. Արմենակյանի արտադրության կազմակերպության ունեցած անվճարունակության և սնանկացման հիմնախնդիրները, տնտ. թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման ատենախոսության ունեցած, Երևան 2011թ., էջեր 85-96:

³⁵ Արմենակյան Կ. Ռ. Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության և կանխատեսման հիմնախնդիրները' (Յ. Գ. Մնացականի օրինակով), տնտ. թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման ատենախոսության ունեցած, Եր. 2005, էջեր 34-67:

կայ ու նու թյ ան հիմնական ցուցանիշը...»³⁶:

Այսպիսով՝ կայ ու նու թյ ու նը տնտեսական համակարգի կարողությունն է՝ պահպանել ու իր ուրակը փոփոխվող արտաքին և ներքին միջավայրի պայմաններում: **Մեր կարծիքով, կազմակերպության ֆինանսական կայ ու նու թյ ու նը հնարավոր է ապահովել միայն կապիտալի ձևավորման, բաշխման և օտարործման փուլ էրում արդյունավետ ամբողջական ներքին վերահսկողության մեխանիզմների կիրառման դեպքում:**

Կազմակերպությունների ֆինանսական կայ ու նու թյ ան վրա ազդում են մեծ թվով գործոններ, որոնք կարելի է դասակարգել ըստ առաջացման տեղի՝ ներքին և արտաքին, ըստ արդյունքների հնարավորության՝ առաջնային և երկրորդային, ըստ կառուցվածքի՝ պարզ և բարդ, ըստ ժամանակի գործողության հաստատուն և փոփոխական գործոնների³⁷:

Ներքին գործոնները կախված են կազմակերպության աշխատանքների կազմակերպման հետ: Արտաքին գործոնները հասկանալի պատճառներով որևէ կերպ կապված չեն կազմակերպության ղեկավար անձակազմի և աշխատանքային կուլտիվի որոշումներից:

Կազմակերպության ղեկավար անձանց արհեստավարժությունը և համարժեքությունը, ներքին միջավայրում նրանց կողմից փոփոխությունները հաշվի առնել ու ունակությունը, աշխատանքային բարդությունները մեծ մասամբ համարվում են ֆինանսական կայ ու նու թյ ան ամենակարևոր գործոն: Բացի նշվածներից, ներքին գործոններին դասվում են

1. թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների կազմը ու կառուցվածքը, շուկայի որոշակի մասնաբաժին զբաղեցնել ու կազմակերպության ներուժային հնարավորությունը,
2. ակտիվների նախընտրելի կազմն ու կառուցվածքը, ինչպես նաև ակտիվների կառավարման արդյունավետ ռազմավարության ճիշտ

³⁶ Ստեփանյան Թ. Ա. Ֆինանսական կայ ու նու թյ ան գնահատման և բարելավման հիմնախնդիրները (ՀՀ ծխախոտի արտադրության կազմակերպությունների օրինակով), տնտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2013թ, էջ 28:

³⁷ Пястолов С.М. Экономический анализ деятельности предприятия: учебник /С.М. Пястолов. – М.: Академический Проект, 2010. ст. 336-337.

ընտրությանը,

3. կազմակերպության գույքային վիճակը, ֆինանսական ռեսուրսների կազմն ու կառուցվածքը, դրանց վերահսկման ռազմավարության ու մարտավարության ճիշտընտրությունը,
4. փոխառվական շուկայից ներգրավված միջոցները,
5. կազմակերպության ճյուղային պատկանելությունը:

Արտաքին գործոններին վերագրվում են տնտեսվարման ընդհանուր տնտեսական ու սոցիալական պայմանների ազդեցությունը, մասնավորապես, տնտեսական զարգացման մակարդակը ճյուղում, բնակչության վճարունակ պահանջարկը, կառավարության տնտեսական քաղաքականությունը, դրա կայունությունը և հիմնավորվածությունը, տնտեսական գործունեության օրենսդրավական բազան:

Մասնավորապես խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության արդյունավետ կառավարման համար պահանջվում է ֆինանսական կայունության ռազմավարական վերլուծություն, որը պետք է նպաստակառնողված լինի դրա արտաքին և ներքին գործոններին ուսումնասիրմանը: Արտաքին գործոնները ներառում են երկու խումբ՝

1. մակրոմիջավայրի գործոններ, որոնք օբյեկտիվորեն պայմանավորված են տնտեսական գործընթացների կարգավորման հնարավորությամբ և անհրաժեշտությամբ: Այդ գործոնները անմիջականորեն չեն վերաբերում տնտեսվարող սուբյեկտի գործունեությանը, բայց կարող են ազդել նրա կառավարչական որոշումների վրա և գտնվել կարգավորման վերահսկողությունից դուրս: Մակրոմիջավայրը ներառում է տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, տեխնոլոգիական և էկոլոգիական գործոններ, որոնք արտացոլում են երկրում և հասարակության մեջ ամբողջությամբ սոցիալ տնտեսական հարաբերությունները³⁸:
2. միկրոմիջավայրի գործոններ, որոնք ձևավորվում են տնտեսվարող սուբյեկտի մակարդակով, կապված են շուկայում նրա դիրքի և արտաքին միջավայրի սուբյեկտների փոխհարաբերությունների հետ: Այդ գործոններից Գ.

³⁸Теория экономического анализа : учебник /А. Д.Шеремет. - 2-е изд., дополненное. - Москва : Инфра-М, 2010. ст. 42-71.

Լիֆերենկոն³⁹ կարևորել է սպառողներին, մատակարարներին, կրեդիտորներին, մրցակիցներին, վարձու աշխատողներին, պետական մարմիններին:

Ելնելով ՀՀ խմիչքների արտադրության կազմակերպչությունների արտաքին և ներքին միջավայրերի վերլուծության արդյունքներից՝ կարծում ենք, որ վերը թվարկվածներին որպես լրացնող մակրոմիջավայրի գործոններից են տնտեսականը, քաղաքականը, նորմատիվաիրավականը, տեխնոլոգիականը, էկոլոգիականը, որոնք էական ազդեցություն են ունենում ապրանքաշրջանառության ծավալի ու կառուցվածքի, այդ թվում նաև ուղղակի ներդրումների ներհոսքի վրա:

Մեր կարծիքով, միկրոմիջավայրի հիմնական տարրերին են վերաբերում բոլոր այն բաղադրիչները, որոնք ուղղակիորեն ներգործում են խմիչքների արտադրության կազմակերպչությունների գործունեության վրա և նպաստում են վերջիններիս մրցակցային դիրքի ամրապնդմանը, մրցունակության բարձրացմանը: Եվրասիական տնտեսական համագործակցության շրջանակներում կարևոր նշանակություն պետք է տրվի գնորդների աշխարհագրական, և մասնավորապես նաև ԵՏՄ շուկայի շրջանակներում մրցակիցների զբաղեցրած դիրքին: Հեռանկարում նշված բաղադրիչներից մեծապես կախված կլինի խմիչքների արտադրությանը զբաղվող հայերնական կազմակերպչությունների ֆինանսական անվտանգությունը:

Հայտնի դրույթ է, որ որքան բարձր է մրցակցությունը, այնքան դժվար է կազմակերպչության համար գոյատևելը և սեփական ֆինանսական կայունության ապահովելը: Այդ հարցում էական նշանակություն են ստանում միկրոմիջավայրի գործոնները, որոնցից նշենք գործունեության ճյուղային առանձնահատկությունները՝ միջճյուղային շահութաբերությունը, ճյուղում մրցակցության աստիճանը, իրացման ծախսերի ծավալը և կառուցվածքը, ճյուղում ներդրումային ակտիվությունը, մրցակցության հինգ ուժերը⁴⁰

³⁹Финансовый анализ предприятия: Учебное пособие /Г.Н. Лиференко.— М: Издательство «Экзамен», 2005. ст.124-150.

⁴⁰Портер М. Конкурентное преимущество: Как достичь высокого результата и обеспечить его устойчивость / Майкл Е. Портер ; [пер. с англ.] — М. : Альпина Бизнес Букс, 2005. ст. 221-247.

հաշվի առնելով՝ խմիչքների արտադրության առանձնահատկությունները, մրցակից ընկերությունների միջև մրցակցությունը, թողարկվող արտադրատեսակների գծով մրցակցությունը, նոր մրցակիցների ի հայտ գալու վտանգը, մատակարարների տնտեսական հնարավորություններն ու կարողությունները, խմիչքներ սպառողների-գնորդների տնտեսական հնարավորությունները: Նկատի ունենալով ՀՀ-ում արտարժույթի փոխարժեքի տատանման ռիսկը՝ արտաքին գործոնների շարքում էական ենք համարում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունը:

Նշված ուժերը նշանակալիորեն ազդում են մրցակցային պայքարի վրա և կարող են հանգեցնել ցանկացած կազմակերպության մրցակցային դիրքի փոփոխության:

Միկրոմիջավայրի հիմնական բաղադրիչներից, վերոնշյալով հանդերձ, կարևորում ենք նաև խմիչքների արտադրության ճյուղում սեզոնայնությունը: Բացի դրանից, կարևոր պահ է համարվում ֆինանսական կայունություն կանխատեսման գործընթացում արտաքին միջավայրի այն փոփոխականներին, որոնք ազդում են կոնկրետ խմիչքների ենթաճյուղերից որևէ մեկի արտադրական կազմակերպությունների գործունեությանը: Այս տեսանկյունից ոչ ալկոհոլային խմիչքներն առավել սեզոնային արտադրանք են, որի սպառումը կախված է կլիմայից և բնական պայմաններից: Օրինակ՝ 2010թ. շոգը նպաստեց տվյալ ենթաճյուղում վաճառքի ծավալի աճին գրեթե 65 տոկոսով: Բացի նշվածից կարևոր գործոն է համարվում բնակչության եկամուտների մակարդակը, որի աճին համապատասխան էլ ավելանում է ոչ ալկոհոլային խմիչքների սպառումը: Որոշ երկրների առումով համեմատականը ներկայացվել է թիվ 1.1.1 աղյուսակում:

Աղյուսակ 1.1.1

Արտաքին միջավայրի որոշ էական փոփոխականներ, որոնք ազդում են ոչ ալկոհոլային խմիչքների շուկայի զարգացման վրա⁴¹

Երկիրը	Սպառումը (լիտր)	Միջին ամսական աշխատավարձը (ԱՄՆ դոլար)	Միջին ջերմաստիճանը
Չեխիա	196	1280	7,3

⁴¹Саакян Т.Г. Прогнозное моделирование финансовой устойчивости предприятий отрасли по производству безалкогольных напитков на основе рейтинговой оценки. [Текст]. Т.Г.Саакян. Молодой ученый. 2013. N 11. ст. 451-456.

Լեհաստան	182	1700	8
Էստոնիա	120	1270	4,8
Ռուսաստանի Դաշնություն	87	760	-5,5
ԱՄՆ	331	4100	13,4

Ներքին գործոնները կախված են ոչ միայն կազմակերպության գործունեությունից, այլև ցույց են տալիս կազմակերպության ֆինանսական ներուժը, դրա օգտագործման արդյունավետությունը: Այդ գործոնների բացասական կամ դրական ազդեցությունը հիմնականում որոշվում է կառավարման քաղաքականության գրագիտությամբ⁴²: Ըստ Լ. Չվյագինի տեսակետի՝ կազմակերպության զարգացման նպատակ է համարվում անխափան արտադրական գործընթացի ապահովման համար ֆինանսական ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխումը⁴³: Բերված տեսակետից հետևում է, որ կազմակերպության ֆինանսական կայունությունը կախված է ֆինանսատնտեսական և արտադրական գործոնների ամբողջական կառավարման որակից և որոշում է կազմակերպության գործունեության արդյունքները:

Խմիչքների արտադրության կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող ներքին գործոններին էլ ընդհանուր առաջարկում ենք հետևյալները.

- տեխնոլոգիան, տեխնիկական ապահովվածությունը և նորամուծությունների մակարդակը,
- շահութաբաժնային քաղաքականությունը,
- աշխատողների մոտիվացիոն համակարգը,
- կազմակերպության կազմակերպական կառուցվածքը,
- մատուցվող ծառայությունների և թողարկվող արտադրանքի կազմը և կառուցվածքը,
- կապիտալի կազմը, կառուցվածքը և դրակառավարման արդյունավետությունը,
- ակտիվների, ֆինանսական ռեսուրսների կառավարման մարտավարությունն ու ռազմավարությունը:

Կազմակերպության ֆինանսական կայունություն ներքին

⁴²Шеремет А. Д. Теория экономического анализа : учебник / А. Д. Шеремет. – М. : Инфра-М, 2011. ст. 42-49.

⁴³Звягин Л. С. Системный анализ как новое направление исследования процессов управления [Текст] / Л. С. Звягин // Молодой ученый. 2014. №3. ст. 420-424.

գործունեությունը կախված են անմիջականորեն սեփական գործունեության և մասնավորապես ֆինանսական ծառայության բաժնի աշխատանքների կազմակերպումից:

Խմիչքների արտադրության կազմակերպությունների գործունեության հաջողությունը հիմնականում կախված է թողարկվող արտադրանքի տեսականուց և որակից: Կարևոր նշանակություն ունի շուկայում բարձր պահանջարկ ունեցող արտադրատեսակների գծով ձեռք բերված ծավալների պահպանումը, ինչպես նաև էական դեր է ունենում կառավարման կիրառվող մոդելը: Դրանից կախված են կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքները և հետևաբար նաև ֆինանսական կայունությունը: Ֆինանսական կայունության բնույթի և դերի ուսումնասիրման համար կարևոր է բացահայտել կապիտալի բաղկացուցիչ մասերը: Սեփական և փոխառու կապիտալների միջև ցանկալի հարաբերակցության հաստատումը, դրան վերահսկողության նպատակով ճիշտ ռազմավարության ու մարտավարության ընտրությունը համարվում է կազմակերպության ֆինանսական կայունության բարձրացման կարևոր ներքին գործիք:

Կազմակերպության ֆինանսական կայունության վերահսկողության մեկ այլ կարևոր գործիքներից է ակտիվների օպտիմալ կառուցվածքը և դրանց արդյունավետ կառավարումը: Այդ գործիքի ազդեցության մեխանիզմը հանգում է հետևյալին՝

շրջանառու կապիտալը շրջապտույտի ընթացքում անընդհատ փոխում է իր ձևը՝ վերածվելով դրամական միջոցներից ապրանքային պաշարների, իսկ այնուհետ դեբիտորական պարտքեր և վերջապես նորից դրամական ձևի՝ ավարտելով շրջանառու ակտիվների շրջապտույտի փուլը: Որպես կանոն կազմակերպության ընթացիկ ակտիվներն անհրաժեշտ է ձևավորել սեփական կապիտալի և կարճաժամկետ փոխառու կապիտալի, իսկ ոչ ընթացիկ ակտիվները՝ ի հաշիվ սեփական և երկարաժամկետ փոխառու կապիտալի:

Ինչպես ցույց են տալիս դիտարկումները, խմիչքներ արտադրող հայրենական արտադրական կազմակերպությունների ֆինանսական կայունությունը կախված է մեծ թվով ներքին և արտաքին գործունեությունից, որոնք գործունեության արդյունավետության վրա ցուցաբերում են ինչպես դրական, այնպես էլ բացասական

ազդեցություն: Ուստի հաշվի առնելով խմիչքների արտադրության ենթաճյուղերի կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման մեխանիզմների առանձնահատկությունները՝ ատենախոսության հետագա շարադրանքում կփորձենք վեր հանել այդ գործընթացին բնորոշ հիմնական օրինաչափությունները: Տնտեսության մեջ ճգնաժամային գործընթացների առաջացման պատճառների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, որոնք անմիջականորեն ազդում են կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա, հնարավորություն է ընձեռում դրանք դասակարգել ըստ ազդեցության աստիճանի՝ արտաքինի և ներքինի: Մեր կողմից ամփոփ ձևով թիվ 1.1.2 աղյուսակում ներկայացվել է նման դասակարգման հեղինակային մոտեցում:

Աղյուսակ 1.1.2.

Կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող ճգնաժամային գործընթացների առաջացման պատճառների դասակարգում⁴⁴

Ներքին	Արտաքին
<p>Կատարյալ ակուն</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպության կազմակերպարարական անարդյունավետձև՝ նկատի ունենալով օրենսդրական և հարկային հետևանքները, • կառավարման անարդյունավետ կամ ոչ համարժեք կառուցվածք, • կադրերի որակավորման ցածր աստիճան, • անարդյունավետ մեջմեջներկա, • կառավարման մեջ ճկունություն և օպերատիվություն բացակայություն, • կառավարման ռազմավարություն և մարտավարություն անհամապատասխանություն, <p>Աղյուսակ 1.1.2-ի շարունակություն</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպության կառավարման ժամանակակից մեխանիզմների և գործիքների ոչ լիարժեք օգտագործում: 	<p>Չամաշխարհային զարգացման գլոբալ սցենարներ</p> <ul style="list-style-type: none"> • ժամանակի և տարածության մեջ համաշխարհային ճգնաժամերով և փոփոխություններով պայմանավորված անորոշությունը, • ֆինանսական ցուցանիշների վերահսկման ցածր արդյունավետությունը, ինչը կապված է միջազգային ֆոնդային շուկաներում տեղի ունեցող փոփոխությունների հետ, • ասրանքների, աշխատանքների և ծառայությունների նորարարական ներդրումային գրավչություն, ծավալների ու պահանջարկի գլոբալ կառուցվածքային փոփոխությունները, • համաշխարհային ասպարեզում քաղաքական փոփոխությունները, որոնք արտացոլվում են երկրների ֆինանսատնտեսական համագործակցության վրա, • ազգային և համաշխարհային տնտեսության աճող փոխկապակցությունը, ինչը հանգեցնում է ճգնաժամի փոխանցմանը:
Ֆինանսահարկային	Երկրում սոցիալ-տնտեսական ընդհանուր

⁴⁴ Աղյուսակը կազմվել է հեղինակի դիտարկման արդյունքների հիման վրա:

<ul style="list-style-type: none"> • ամբողջությամբ ֆինանսական կառավարման արդյունավետ համակարգի բացակայություն, • ֆինանսական կառավարման մեթոդների ոչ լիարժեք օգտագործում, • մասնավորապես կապիտալի կառուցվածքի օպտիմալացում, արտադրական պաշարների նորմավորում, դրամական միջոցների օպտիմալ չափաբանակի որոշում, • ֆինանսական հաշվարկներում և բիզնես պլանում անճշտությունները, սխալները, • հաշվապահական և հարկային հաշվառման կազմակերպման գործընթացում սխալները, • հարկային վերահսկողություն ենթահամակարգի բացակայությունը, • ծախսերի անարդյունավետ կառավարումը և վերահսկողությունը: 	<p>Չարգացման գործոններ</p> <ul style="list-style-type: none"> • պետական կարգավորման հետևանքով տնտեսա-իրավական ոլորտներում փոփոխությունները, • երկրի Չարգացման առաջնահերթություններում փոփոխությունները, • երկրի անվտանգության չափորոշիչների գերազնահատումը, • երկրի տարածքային Չարգացման քաղաքականության ցածր արդյունավետությունը, որն առաջացնում է լրացուցիչ ֆինանսական ռիսկեր, • արժեզրկման առկայություն, դրա փոփոխման միտումները, • հարկային և մաքսային համակարգերի անկայունությունը, • բնակչության իրական եկամուտների նվազումը, • բնական մենաշնորհների ծառայությունների գծով սակագների բարձր մակարդակը:
<p>Արտադրական</p> <ul style="list-style-type: none"> • արտադրության ձևավորված կառուցվածքի իներտությունը, • հիմնական միջոցների բարոյական և ֆիզիկական մաշվածությունը, • աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակը, • ասրանքների բարձր կամ ոչ մրցունակ ինքնարժեքը: 	<p>Շուկայական գործոններ</p> <ul style="list-style-type: none"> • ներքին շուկայի ծավալների նվազում, • շուկայում մրցակցության ու ժեղացում, • արտաթույլային շուկայում ցնցումները, • արտաքին և ներքին շուկաներում գների անբարենպաստ տատանումներ, • փոխարինող ասրանքատեսակների առաջարկի աճ:
<p>Շուկայական</p> <ul style="list-style-type: none"> • առևտրային ռիսկի բարձր մակարդակը, • արտադրանքի մրցունակության մակարդակի անկումը, • մատակարարների և գնորդների սահմանափակ շրջանակներից կախվածությունը: 	<p>Այլ արտաքին գործոններ</p> <ul style="list-style-type: none"> • քաղաքական անկայունության դրևսրումները, • տնտեսական ակտիվության անկումը, • բնակչի մակայան անբարենպաստ պայմանները, • համաշխարհային տնտեսության մեջ նկատվող գլոբալ վերափոխումները:

1.2. Ֆինանսական կայունության վերլուծության և կանխատեսման մեթոդները

Խմիչքների արտադրության կազմակերպության ներքին ֆինանսական կայունության ապահովման գործընթացում էական դեր ունշանակություն ունեն վերլուծության կիրառվող մեթոդներն ու վերահսկողության գործիքները: Ուստի դրանց վեաբերյալ առկա տեսակետների համեմատական վերլուծությանն առաջին հերթին անհրաժեշտ է ֆինանսական կայունության ռազմավարությանը մշակել ու համար:

Կազմակերպության ներքին կառավարչական հաշվառման կարևոր տարր և փուլ է համարվում վերլուծությանը, որը համարվում է ֆինանսական կայունության վերահսկման գործում հիմնավորված և որակյալ որոշումների ընդունման համար գործիք:

Ըստ Մ Մելնիկի տեսակետի⁴⁵՝ կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծությանը համարվելով ֆինանսական վիճակի վերլուծության կարևոր գործընթաց՝ պետք է վերածվի ֆինանսական ռազմավարության հիմնավորման ակտիվ և գործող գործիքի և դառնա ֆինանսական գործընթացների օպերատիվ կարգավորման ու կորրեկցիայի միջոց:

Ֆինանսական կայունության վերլուծության մեթոդների կիրառումը գործնականում պետք է ապահովի հետևյալ գործառնությունները՝


- ֆինանսական ռեսուրսների ապահովվածության և գործունեության արդյունավետության տեսանկյունից կազմակերպության ֆինանսական վիճակի հետազոտում,
- ֆինանսատնտեսական գործունեության թերությունների օպերատիվ բացահայտում,
- ֆինանսական ռեսուրսների օգտագործման բարելավման ուղղությունների որոշում և տվյալ կազմակերպության զարգացման արդյունավետ ռազմավարության հիմնավորում:

Ֆինանսական կայունության ապահովման համար կազմակերպության անհրաժեշտ է ապահովել նորմալ

⁴⁵ Мельник М.В. Организация системы внутреннего аудита и контроля в крупных организациях // Аудиторские ведомости. 2012. № 1-2. ст. 118-134.

գործունեության համար բոլոր անհրաժեշտ պայմաններով, մասնավորապես ձևավորել և օգտագործել կապիտալը այնպես, որպեսզի եկամուտները միշտ գերազանցեն ծախսերը՝ միաժամանակ ապահովելով պահանջվող վճարունակությունը: Հարկ է նշել, որ ընդունվող ֆինանսական որոշումների հիմնավորվածությունը, կառավարչական խնդիրների կատարման հաջողությունն ուղղակիորեն կախված են կազմակերպության փաստացի ֆինանսական վիճակի ամբողջական բնութագրությունից:

Ըստ ռուս հետազոտող Ն.Կազակովայի տեսակետի ընդհանրացման արդյունքում ստորև բերված թիվ 1.2.1 գծապատկերում ներկայացրել ենք ֆինանսական վիճակը բնութագրող ամփոփող ցանկիչներ:



Գծապատկեր 1.2.1

Ֆինանսական վիճակը բնութագրող ամփոփող ցանկիչների ընդհանրացված մոտեցում⁴⁶

⁴⁶ Казакова Н.А. Управленческий анализ и аудит компании в условиях кризиса. М.: Дело и сервис, 2010. 304 с. Михнюк И. Антикризисная диагностика предприятия//Антикризисное управление. Ежемесячная газета. 2010. № 6 (24). ст.12–13.

Կազմակերպության պարտավորությունները մարելու կարողության գնահատման համար կիրառվում են վճարունակության ցուցանիշներ⁴⁷:

Կազմակերպության վճարունակությունը սուբյեկտի տնտեսական գործունեության կարողությունն է ժամկետում մարելու իր կրեդիտորական պարտավորությունները: Ինչպես նշում է Վ. Բոչարովը. վճարունակությունը համարվում է կազմակերպության ֆինանսական վիճակի կայունության հանգուցային նշաններից մեկը⁴⁸:

Կազմակերպության վճարունակությունը, ըստ Ի. Լարիոնովի տեսակետի⁴⁹, բաղկացած է երկու գործոններից՝

1. ակտիվների առկայություն (գույք և դրամական միջոցներ), որոնք բավարար են կազմակերպության ունեցած բոլոր պարտավորությունները մարելու համար:
2. տնօրինած ակտիվների իրացվելիության աստիճանը բավարար է, որպեսզի դրանք փոխարկվեն պարտավորությունները մարելու համար բավարար գումարի դրամական միջոցների:

Հարկ է նկատել, որ Ի. Լարիոնովի տեսակետում բերված առաջին գործոնի վերլուծության դեպքում ուսումնասիրվում է կազմակերպության մոտգուտ, սեփական ակտիվների առկայությունը: Եթե կազմակերպության սեփական ընթացիկ ակտիվները բացասական են, այսինքն սեփական կապիտալով ապահովվածությունը բավարար չէ, ապա կազմակերպությունը չի կարող վճարել իր բոլոր պարտավորությունները, քանի որ պարտավորությունների գումարը այս դեպքում կգերազանցի կազմակերպության բոլոր ակտիվների գումարը: Նման կազմակերպությունը կարող է վճարունակ լինել կարճաժամկետ փուլում, վճարել ընթացիկ պարտքերը, բայց երկարաժամկետ փուլում մեծ է սնանկանալու հավանականությունը:

Ֆինանսական կայունության ախտորոշման մոտեցումների վերլուծության հիման վրա հնարավոր է դառնում հստակեցնել վճարունակության առավել կիրառելի մեթոդները: Ֆինանսական

⁴⁷Виноходова А.Ф., Марченкова И.Н. МЕТОДИКА ОЦЕНКИ ПЛАТЕЖЕСПОСОБНОСТИ ПРЕДПРИЯТИЯ // Фундаментальные исследования. – 2009. – № 1 ст. 53-54.

⁴⁸Бочаров В.В. Финансовый анализ Краткий курс. 2-е изд. — СПб.: Питер, 2009. ст. 18-32.

⁴⁹Антикризисное управление / рук. авт. колл, проф. И. К. Ларионов. – [6-е изд., перераб. и доп.]. – М. : Дашков и К, 2009. ст. 17-18.

կառավարման դոկտրինայի ն համապատասխան՝ ֆինանսապես կայուն կազմակերպությունը պետք է լինի վճարունակ: Գործնականում ֆինանսական կայունության մասին հնարավոր չէ դատել առանց վերլուծելու կազմակերպության վճարունակությունը: Կազմակերպության կայուն ֆինանսական վիճակը պայմանավորված է ազդող գործոնների վերահսկողության արդյունավետ համակարգերի առկայությամբ, որոնք էլ բնութագրում են տնտեսական գործունեության արդյունքները:

Կազմակերպության ֆինանսական կայունության գնահատումը հատուկ չափանիշների և դրանք բնութագրող ցուցանիշների հետազոտումն է, ինչը տալիս է ֆինանսական վիճակի վերաբերյալ օբյեկտիվ պատկեր: Վերլուծության արդյունքները հնարավորություն են ընձեռում բացահայտել գոյություն ունեցող և միայն հետազոտությամբ նկատված խնդիրները և հետևաբար դրանց լուծման համար հրավիրել ղեկավար անձնակազմի ու սեփականատերերի ուշադրությունը:

Բացարձակ ցուցանիշները հնարավորություն են տալիս որոշել, թե միջոցների ինչ աղբյուրներ են օգտագործվում պաշարների ֆինանսավորումն իրականացնելու համար:

Արտադրական կազմակերպություններում արտադրության գործընթացում տեղի է ունենում պաշարների, ապրանքանյութական արժեքների անընդհատ համալրում: Այդ պայմաններում օգտագործվում են ինչպես սեփական կապիտալը, այնպես էլ փոխառու կապիտալը, մասնավորապես կարճաժամկետ և երկարաժամկետ փոխառություններն ու վարկերը:

Հայ տնտեսագետ գիտնականերից ֆինանսական կայունության բացարձակ գնահատման իրենց մոտեցումներն են առաջարկել Ա. Բայարյանը⁵⁰ և Ա. Մաթևոսյանը⁵¹: Մասնավորապես, Ա. Մաթևոսյանի տեսակետում շեշտադրվել են ֆինանսական կայունության կարճաժամկետ, ընթացիկ և երկարաժամկետ տեսակները: Կազմակերպության ֆինանսական կայունության բարձրացման միջոցառումների մշակման և համալիր վերլուծության

⁵⁰Բայարյան Ա.Յ.՝ «Զեռնարկությունների ֆինանսական դրություն գնահատումը», Եր. Ասոդիկ, 2002, էջեր 41-52:

⁵¹Ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ արդյունաբերական կազմակերպություններում, Աշոտ Մաթևոսյան, Եր.: Ոսկան Երևանցի, 2011, էջեր 38-41:

իրականացման նպատակով կարևորվում են հարաբերական ցուցանիշները: Ֆինանսական կայունության ցուցանիշների ընտրությունը պայմանավորված է կազմակերպությանների ճյուղային պատկանելիությունից, որում գլխավոր դեր են խաղում սեփական ընթացիկ ակտիվներով ապահովվածությունը, փոխառու կապիտալը, սեփական կապիտալի շարժունակությունը:

Ռուսաստանի Դաշնության նույն էական նշանակությունն է տրվում գուտակտիվների գնահատման մեթոդին⁵²: Սակայն առավել մեծ կիրառություն ունի գործակցային մեթոդը, որի շրջանակներում տարբերակվում են երկու ուղղություններ՝

- Կապիտալի կառուցվածքը բնութագրող գործակիցների հաշվարկ՝
- Ինքնավարության գործակիցը,
- Ֆինանսական կախվածության գործակիցը,
- Փոխառու և սեփական միջոցների հարաբերակցության գործակիցը,
- Սեփական շրջանառու միջոցներով մանևրելու գործակիցը,
- Սեփական ֆինանսավորման աղբյուրներով շրջանառու կապիտալի ապահովվածության գործակիցը,
- Սեփական միջոցներով ապահովվածության գործակիցը,
- Սեփական միջոցներով պաշարների ապահովվածության գործակիցը:
- Պարտավորությունների ծածկման մակարդակը, պարտքի սպասարկման ծախսերը որոշող գործակիցների հաշվարկ:

Սակայն պետք է նկատել, որ առավել արդյունավետ բնույթ են կրում այն մոտեցումները, որոնցում ֆինանսական դրության բաղադրիչները բնութագրող ցուցանիշների ընտրությամբ կատարվում է բալային գնահատում և դասերի որոշում⁵³:

Վճարունակության և ֆինանսական կայունության փոխկապակցության համատեքստում կարևորում ենք Դ. Դյուրանի կողմից առաջարկված մոտեցումը: Վերջինս հաշվարկվում է ստորև թիվ 1.2.1 աղյուսակում ներկայացված ցուցանիշների միջոցով, ըստ

⁵² Порядок оценки стоимости чистых активов акционерных обществ, приказ Минфина РФ № 10н, ФКЦБ РФ № – 3-6/пз от 29.01.2003.

⁵³ Система показателей и алгоритм комплексно сравнительной рейтинговой оценки// ВестникОрелГИЭТ. 2011. №6. с. 22-30. Кувшинов Д.А., Половцев П.И.. Рейтинговая оценка финансового состояния предприятия// Экономический анализ: теория и практика. - 2007. №6. ст. 25-28

որոնց վարկանշային գումարային գնահատականների՝ կատարվում է հետազոտվող կազմակերպչությունների վճարունակություն դասակարգում:

Ըստ Դ.Դյուրանի իրենց վճարունակություն գնահատականին համապատասխան կազմակերպչությունները դասակարգվում են հետևյալ խմբերում.

- Առաջին խմբում ներառվում են բարձր ֆինանսական կայունություն ունեցող կազմակերպչությունները, որոնք վստայություն են ներշնչում փոխառու միջոցների վերադարձման հարցում,
- Երկրորդ խմբում ներառվում են կազմակերպչությունները, որոնցում առկա է պարտավորությունների գծով որոշակի ռիսկ, բայց դրանք դեռևս չեն դիտարկվում ռիսկային,
- Երրորդ խմբում ներառվում են խնդրահարույց կազմակերպչությունները,
- Չորրորդ խմբում ներառվում են սնանկացման բարձր ռիսկ ունեցող կազմակերպչությունները, որոնց վիճակը չի կայունացել նույնիսկ ֆինանսական առողջացման միջոցառումների ձեռնարկելուց հետո,
- Բարձր ռիսկայնություն ունեցող կազմակերպչությունները, որոնք գործնականում սնանկ են:

Այլ ուսակ 1.2.1

Ըստվճարունակություն մակարդակի կազմակերպչության դասակարգման՝ Դ.Դյուրանի մոտեցումը⁵⁴

Ցուցանիշը	Ըստմիջակայքերի վճարունակություն դասերը				
	I դաս	II դաս	III դաս	IV դաս	V դաս
Ակտիվների շահունթաբերություն, %	30% և ավելի - 50 բալ	29,9–20% - (49,9–35 բալ)	19,9–10% - (34,9–20 բալ)	9,9–1% - (19,9–5 բալ)	փոքր է 1% - 0 բալ
Ընթացիկ իրացվելիություն գործակից	2,0 և ավելի - 30 բալ	1,99–1,7 - (29,9–20 բալ)	1,69–1,4 - (19,9–10 բալ)	1,39–1,1 - (9,9–1 բալ)	1 և փոքր - 0 բալ
Ինքնավարություն գործակից	0,7 և ավելի - 20 բալ	0,69–0,45 - (19,9–10 բալ)	0,44–0,3 - (9,9–5 բալ)	0,29–0,2 - (5–1 բալ)	Փոքր է 0,2 - 0 բալ
Դատերի սահմանային միջակայքերը	100 բալ	99–65 բալ	64–35 բալ	34–6 բալ	0 բալ

⁵⁴Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / <http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html> (дата доступа 07.04.2013).

Իրացվել ի ու թյ ան և ֆինանսական կայ ու ն ու թյ ան փոխկապակց ու թյ ան համատեքստում համեմատական վերլ ու ծ ու թյ ան նպատակով կարևորել ենք Լ. Դոնցովայ ի և Ն.Նիկիֆորովայ ի մոտեցումը, որը հիմնված է թիվ 1.2.2 աղյ ու սակ ու մ բերված ց ու ց անիշ ների և դրանց փաստացի նշանակ ու թյ ու ն ներին համապատասխան տրվող բալ այ ի ն գնահատականների, ինչպես նաև տարանջատվող ռիսկի հինգ դասերի վրա:

Լ. Դոնցովայ ի և Ն. Նիկիֆորովայ ի գ ու մ ար այ ի ն բալ այ ի ն գնահատման մոտեցմամբ սահմանվ ու մ են ռիսկայ ն ու թյ ան հինգ դասեր.

- 1-ին դաս՝ ֆինանսական կայ ու ն ու թյ ան լ ավ պաշար ու ն եց ող կազմակերպ ու թյ ու ն ներ, ինչ ը վստահ ու թյ ու ն է ներշնչ ու մ փոխառ ու միջ ոց ների վերադարձ ման առ ու մ ով,
- 2-րդ դաս՝ կազմակերպ ու թյ ու ն ներ, որոնք դրսևոր ու մ են պարտավոր ու թյ ու ն ների գծ ով որոշակի ռիսկ, բայց որպես ռիսկայ ի ն դեռևս չ են դիտարկ վ ու մ,
- 3-րդ դաս՝ խնդրահար ու յ ց կազմակերպ ու թյ ու ն ներ, որոնց տրված փոխառ ու միջ ոց ների դիմաց տոկոսագ ու մ ար ների լ ռիվ ստաց ու մ ը կասկածել ի է,
- 4-րդ դաս՝ կազմակերպ ու թյ ու ն ներ, որոնք ու ն են սնանկաց ման բարձր ռիսկ, ն ու յ նիսկ ֆինանսական առ ող ջ աց ման միջ ոց առ ու մ ներ ձեռնարկել ու դեպք ու մ,
- 5-րդ դաս՝ սկզբ ու ն քոր են ֆինանսապես անկարող ու նակ կազմակերպ ու թյ ու ն ներ:

Աղյ ու սակ 1.2.2

Կազմակերպ ու թյ ու ն ների ֆինանսական կայ ու ն ու թյ ան Լ.Դոնցովայ ի և Ն.Նիկիֆորովայ ի գ ու մ ար այ ի ն բալ այ ի ն գնահատման մոտեց ու մ ը⁵⁵

	Ց ու ց անիշ ը	Ը ս տ չ ա փ ան իշ ն եր ի դ աս եր ի ս ա հ մ ան ն եր ը				
		I	II	III	IV	V
1	Բացարձակ իրացվել ի ու թյ ան գործակից	0,5 և ավել ի = 20 բալ	0,4 = 16 բալ	0,3 = 12 բալ	0,2 = 8 բալ	0,1 = 4 բալ
2	Կրիտիկական գնահատման գործակից	1,5 և ավել ի = 18 բալ	1,4 = 15 բալ	1,3 = 12 բալ	1,2-1,1 = 9-6 բալ	1,0 = 3 բալ

⁵⁵Донцова Л.В., Никифорова Н.А. Анализ бухгалтерской отчетности. М.: Издательство «Дело и сервис», 2004. 336 с.

3	Ընթացիկ իրացվել ի ու թյան գործակից	2 նավել ի = 16,5 բալ	1,9-1,7 = 15-12 բալ	1,6-1,4 = 10,5-7,5 բալ	1,3-1,1 = 6-3 բալ	1 = 1,5 բալ
4	Ֆինանսական անկախություն գործակից	0,6 նավել ի = 17 բալ	0,59-0,54 = 16,2-12,2 բալ	0,53-0,43 = 11,4-7,4 բալ	0,47-0,41 = 6,6-1,8 բալ	0,4 = 1 բալ
5	Սեփական ֆինանսավորման աղբյուրներով ապահովվածություն գործակից	0,5 նավել ի = 15 բալ	0,4 = 12 բալ	0,3 = 9 բալ	0,2 = 6 բալ	0,1 = 3 բալ
6	Պաշարների և ծախսերի ֆինանսավորման մասով ֆինանսական անկախություն գործակից	1 նավել ի = 13,5 բալ	0,9 = 11 բալ	0,8 = 8,5 բալ	0,7-0,6 = 6,0-3,5 բալ	0,5 = 1 բալ
Դասերի նվազագույն սահմանները		100	85,2 - 66	63,4 - 56,5	41,6 - 28,3	14

Երկայացվածով հանդերձ՝ նշենք, որ վարկանշման նմանաբնույթ մոտեցումները հնարավորություն են ընձեռում իրականացնել ճյուղային կտրվածքով համեմատական վերլուծություններ և վեր հանել տվյալ ճյուղի կազմակերպություններին բնորոշ ուժեղ և թույլ կողմերը: Բայց և այնպես նոր մոտեցումների մշակումը և գործնական կիրառումը վերափոխվող տնտեսական հարաբերությունների շրջանակներում մնում է խիստ հրատապ և արդիական: Նման մոտեցումները Էական նշանակություն կարող են ստանալ ներքին վերահսկողության արդյունավետությանը բարձրացնելու համար, ուստի սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից հիմնական նպատակադրումներից մեկը կհանդիսանա ֆինանսական կայունության վերլուծության և ներքին վերահսկողության նոր մոտեցումների մշակումը:

1.3. Արտադրական կազմակերպություններում ֆինանսական կայունության վերահսկողության ժամանակակից մոտեցումները ծուկայական տնտեսությանը բնորոշ կոշտ մրցակցության պայմաններում կարողանում են գոյատևել ու զարգանալ միայն ֆինանսապես կայուն ու մրցունակ կազմակերպությունները: Միաժամանակ, շուկայական հարաբերություններն առաջ քաշեցին նյութական արտադրության ոլորտի կազմակերպություններում վերահսկողության կազմակերպման հարցերին հատուկ ուշադրություն արժանանցնելու օբյեկտիվ անհրաժեշտությունը:

Շուկայական տնտեսվարման պայմաններում արտադրական կազմակերպությունները, համարվելով ինքնակազմակերպվող սոցիալական կողմնորոշում ունեցող համակարգ, գործում են կոշտ մրցակցային միջավայրում և ունեն տնտեսական ինքնուրույնություն: Նման վիճակում կազմակերպության գործունեությունը լայն իմաստով պետք է նպաստատուղղվի շուկայական մասնաբաժնի պահպանմանն ու ավելացմանը, մրցակիցների նկատմամբ նոր առավելությունների ձեռքբերմանը: Նշվածին համապատասխան՝ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգը պետք է կոչված լինի ապահովել ներկա պայմաններում հետևյալ հիմնական ցուցանիշների արդյունավետությունը.

- Մրցակիցների համեմատաշուկայում կազմակերպության կայուն վիճակը,
- Հասարակության և շուկայի սուբյեկտների կողմից կազմակերպության ճանաչումը,
- Արտադրության և կառավարման կազմակերպման համակարգի ժամանակին հարմարվողականությունը մշտապես փոփոխվող արտաքին միջավայրին: Շուկայական տնտեսության պայմաններում, որին բնորոշ են արտաքին միջավայրի բարձր անորոշությունն ու անկայունությունը, կազմակերպության արդյունավետ կառավարումը ենթադրում է ինչպես ռազմավարական պլանավորման, այնպես էլ վերահսկողության համակարգի պարբերաբար կատարելագործում: Ժամանակակից պայմաններում ներքին վերահսկողությունը ԵՏՄ անդամակցության շրջանակներում աստիճանաբար զորու է դառնալու արտահանման միտվածությունն ունեցող արտադրական կազմակերպությունների արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը:

Սակայն պետք է փաստենք, որ հայրենական կազմակերպություններում և մասնավորապես խմիչքների արտադրության ճյուղում, լիարժեք բացահայտված չեն ֆինանսական կայունության ներքին վերահսկողության հիմնահարցերը կազմակերպության տնտեսական վերլուծության և ֆինանսների, դրա գործառույթների, խնդիրների, սկզբունքների, գնահատման չափանիշների և համակարգային կիրառման հնարավորությունների տեսանկյունից: Հետևաբար, ֆինանսական կայունության ներքին

վերահսկողության համակարգի ձևավորումը և գործնական ներդրումը պետք է դառնան կազմակերպության ֆինանսական կայուն վիճակի ապահովման արդյունավետ գործիքներից մեկը: Որպեսզի վերահսկվի և վերլուծվի կազմակերպության ֆինանսական վիճակը, ինչպես նաև գիտականորեն հիմնավորված որոշվեն կազմակերպության ֆինանսական քաղաքականության հիմնական ուղղությունները նրա կայուն աճի նպատակով, անհրաժեշտ է բացահայտել ֆինանսական կայունության վրա հնարավոր դրական և բացասական ազդեցություններով պայմանավորված փոփոխությունները: Կազմակերպության կայունության բոլոր բաղադրիչները՝ արտադրական, մարքեթինգային և ֆինանսական, փոխապակցված են, փոխընդհանուր են միմյանց և համատեղ ապահովում են ընդլայնված վերարտադրությունը⁵⁶: Նկատենք, որ ֆինանսական կայունությունը արտացոլում է տնտեսական կայունության մյուս բոլոր բաղադրիչների արդյունքներն ու դրանց գոյությունը: Կազմակերպության ֆինանսական կայունության առկա տեսակետներին որպես լրացնող կարող ենք ընդունել մեր կողմից առաջարկվող այն բնութագրությունը, որի համաձայն ֆինանսական կայունությունը կազմակերպության կարողությունն է դիմակայել ու արտաքին միջավայրի փոփոխություններով և ներքին պատճառներով պայմանավորված ապակառուցողական տատանումներին: Քանի որ կազմակերպություններն իրենց կենսափուլի ընթացքում հաջորդաբար անցնում են ֆինանսական կայունության բացարձակ վիճակից ընդհուպ մինչև ճգնաժամային վիճակի, հետևաբար կազմակերպությունների առանց ճգնաժամային փուլերում հայտնվելու երաշխիքներից մեկը կապվում է ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համակարգի ձևավորման ու արդյունավետ կիրառման հետ:

Հարկ է նշել, որ կազմակերպության ճգնաժամ հասկացությունը ժամանակակից մասնագիտական գրականության մեջ նկարագրում է կազմակերպության կենսափուլի ընթացքում տարբեր իրավիճակները: Կազմակերպության ճգնաժամը կարելի է ընկալել որպես չալանավորված և անցանկալի, ժամանակի ընթացքում սահմանափակված

⁵⁶Нагуманова, Р.В. Независимая оценка эффективного управления предприятием. □Текст□□/ Р.В. Нагуманова // Ученые записки, 2006 г. – Казань: Казанский финансово-экономический институт, 2006. ст. 527-532.

գործընթաց, որն էականորեն կարող է խոչընդոտել կամ նույնիսկ անհնար դարձնել կազմակերպության գործունեության ունը: Ճգնաժամի ուժը որոշվում է դրա չափերի և կազմակերպության հիմնարար նպատակները վտնագի ենթարկվելու ձևից⁵⁷:

Քանի որ կազմակերպության կենսափուլը բաղկացած է կայուն զարգացման, անկման և ճգնաժամային իրար հաջորդող փուլերից, հետևաբար, կիրառելով նման մոտեցում, կարող ենք որոշել կազմակերպության ֆինանսական կայունության հետևյալ կենսափուլերը՝

- Բացարձակ կայունության ունից սովորական կայունության անցման փուլ ,
- Սովորական կայունության ունից անկայուն վիճակի անցման փուլ ,
- Անկայուն վիճակից ճգնաժամային ֆինանսական վիճակի անցման փուլ :

Նշվածով հանդերձ՝ փաստենք, որ ֆինանսական կայունության վերահսկողության համակարգի ձևավորման համար էական նշանակություն ունի կազմակերպության մրցակցային առավելության գարգացման ռազմավարության կենսափուլերի և ֆինանսական կայունության տեսակների միջև առկա փոխկապակցությունները հաշվի առնելը (տես՝ թիվ 1.3.1 աղյուսակը): Թիվ 1.3.1 աղյուսակում ներկայացված կազմակերպության մրցակցային առավելության գարգացման ռազմավարության կենսափուլերի և ֆինանսական կայունության տեսակների միջև առկա փոխկապակցությունները կանխորոշում են կայուն զարգացման հնարավորությունները:

Կազմակերպության կենսափուլի ֆինանսական կայունության վերահսկողության նպատակով տեսամեթոդաբանական մոտեցումներում էական նշանակություն են ստացել պաշարների ու դրանց ֆինանսավորման աղբյուրների համադրման⁵⁸, ոչ ընթացիկ ակտիվների ու ընթացիկ ակտիվների ու դրանց ֆինանսավորման

⁵⁷Մաթևոսյան Ա.Վ. Արդյունաբերական կազմակերպության կենսափուլի ֆինանսական առողջացման հիմնահարցերը: Եր.: Յեդիսակային հրատարակչություն, 2009, էջ 10:
⁵⁸Новикова Н. В. Определение типа, ретроспективный анализ и экспертная оценка уровня финансовой устойчивости организации [Текст] / Н. В. Новикова // Проблемы современной экономики: материалы II междунар. науч. конф. (г. Челябинск, октябрь 2012 г.). — Челябинск: Два комсомольца, 2012. ст. 124-128.

աղբյուրների համադրման⁵⁹ մեթոդիկաները, իսկ վերլուծական ընթացակարգերի առումով՝ գործակցային⁶⁰, սնանկացման հավանական վտանգի⁶¹ և ինտեգրալային գնահատման⁶² մոտեցումները:

Աղյուսակ 1.3.1

Կազմակերպության ֆինանսական կայունության տեսակների և մրցակցային առավել ությունների զարգացման ռազմավարության կենսափուլերի միջև փոխկապակցությունը⁶³

Կազմակերպության մրցակցային առավել ությունների զարգացման ռազմավարության կենսափուլերը	Կազմակերպության մրցակցային առավել ությունների կենսափուլերը	Կազմակերպության ֆինանսական կայունության տեսակները
Հարձակողական	սկզբնական փուլ	բացարձակ
	վերելք	բացարձակ/սովորական
	կայուն զարգացում	սովորական
	անկում	անկայուն ֆինանսական վիճակ
Պահպանողական	սկզբնական փուլ	անկայուն ֆինանսական վիճակ
	վերելք	սովորական
	կայուն զարգացում	բացարձակ
	անկում	անկայուն ֆինանսական վիճակ
Չափավոր	սկզբնական փուլ	բացարձակ/սովորական
	վերելք	բացարձակ/սովորական
	կայուն զարգացում	բացարձակ/սովորական
	անկում	սովորական/անկայուն ֆինանսական վիճակ
ճգնաժամ	ճգնաժամ	ճգնաժամային ֆինանսական վիճակ

Ընդհանրացնենք վերոնշյալը. ֆինանսական կայունության վերահսկողության տեսանկյունից դրանք նախտակատարմար ենք

⁵⁹Капанадзе Г.Д. Оценка финансовой устойчивости: методы и проблемы их применения // Российское предпринимательство. — 2013. — № 4 (226). ст. 52-58.

⁶⁰Турманидзе, Т. У. Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности предприятия : учебник / Т. У. Турманидзе. - Москва : Экономика, 2011. 479 с., ինչպես նաև : Ա.Մաթևոսյան ֆինանսական կառավարման հիմնական դիրքերը ՀՀ արդյունաբերական կազմակերպություններում : Մենագրություններ, Երևան 2011, Ոսկան Երևանցի, Էջեր 37-42:

⁶¹Файнова Н. А. Диагностика банкротства и антикризисное управление на предприятии [Текст] / Н. А. Файнова // Молодой ученый. — 2013. №11. ст. 488-490.

⁶²Дмитриев В.В., Дмитриев Н.В., Воскресенская В.А., Фролова А.Д., Кожеко Ю.Р. РАЗВИТИЕ МЕТОДОЛОГИИ ИНТЕГРАЛЬНОЙ ОЦЕНКИ ЭКОЛОГИЧЕСКОЙ ЦЕЛОСТНОСТИ ГЕОСИСТЕМ // Международный журнал прикладных и фундаментальных исследований. 2014. № 8 ст. 78-85.

⁶³Աղյուսակը կազմվել է՝ ելնելով հեղինակի ուսումնասիրության աղբյուրներից:

համարել համակարգել ըստերկու հիմնական հիմնադրույթների՝

1. Բացարձակի՝ ներառել ով պաշարների ու դրանց ֆինանսավորման աղբյուրների համադրման (ՊՖԱՅ) և ոչ ընթացիկ ակտիվների ու ընթացիկ ակտիվների ու դրանց ֆինանսավորման աղբյուրների համադրման (ՈՉԱ և ԸԱՖԱՅ) մեթոդիկաները,
2. Հարաբերականի՝ ներառել ով գործակցային (ԳՄ), սնանկացման հավանական վտանգի (ՍՅՎԳՄ) և ինտեգրալային գնահատման (ԻԳՄ) մոտեցումները:

Ստորև բերված թիվ 1.3.2 աղյուսակում ներկայացրել ենք առաջարկված երկու հիմնական հիմնադրույթների համեմատականը՝ ելնել ով մեր կողմից նախընտրելի ընդունված չափանիշներից:

Աղյուսակ 1.3.2

Ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համակարգի հիմքում կիրառվող հիմնական հիմնադրույթների համեմատականը⁶⁴

Ֆինանսական կայունության վերահսկողության համակարգում կիրառվող մեթոդիկաների որակի գնահատման չափանիշների համախումբը	Առաջին հիմնադրույթ		Երկրորդ հիմնադրույթ		
	ՊՖԱՅ	ՈՉԱ և ԸԱՖԱՅ	ԳՄ	ՍՅՎԳՄ	ԻԳՄ
Նպատակաուղղվածությունը՝ ֆինանսական կայունության ապահովումը	-	-	-	-	+
Անընդհատության սկզբունքը	-	-	-	-	-
Մուտքային և ելքային ցուցանիշների համադրելիությունը	-	-	-	-	-
Ֆինանսական կայունության կոնկրետ տեսակի վրա անմիջականորեն ազդեցություն ունեցող գործոնների վրահիմնվելը	-	-	+	+	+
Կազմակերպության գործունեության դինամիկ և ստատիկ վիճակների ընդհանրացումը	-	+	+	+	+
Ելքային տվյալների միանշանակ մեկնաբանումը, վերլուծաբանի սուբյեկտիվի բացառումը	+	+	-	-	-
Բացարձակ և հարաբերական ցուցանիշների կապը	-	-	-	-	-
Կազմակերպության դինամիկ զարգացմանը հետևելը	-	-	-	-	-
Ախտորոշման արդյունքների և եզրահանգումների հասանելիությունը	+	+	+	+	+
Կազմակերպության ճյուղային առանձնահատկությունները հաշվի առնելը	-	-	-	-	-

⁶⁴Աղյուսակը կազմվել է՝ ելնել ով հեղինակի ու սուսմնասիրության աղբյուրներից:

Քանի որ արտադրական կազմակերպությունը բաց սոցիալ-տնտեսական համակարգ է, հետևաբար կառավարման հիմնադրույթների վերլուծության ամբողջական հիմնավորում է կազմակերպության կայուն զարգացմանն անցնելու հնարավորության ապահովման նպատակով արտաքին և ներքին միջավայրի գործոնները հաշվի առնելու անհրաժեշտությունը⁶⁵: Բերված տեսակետից ակնհայտ է, որ կազմակերպության կայուն զարգացման գնահատումը նպատակահարմար է իրականացնել արտաքին և ներքին կայունության ուղղություններով:

Արտաքին կայունության տակ ընկալվում է արտաքին միջավայրի հետ առանց հակամարտության, մասնավորապես սպառողների, մրցակիցների, մատակարարների, ֆինանսավարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, հարկային և վերահսկող մարմինների հետ փոխազդեցությունը:


Ներքին կայունությունն արտադրական կազմակերպության բոլոր ստորաբաժանումների համամասնությունն է, որն ապահովում է գործունեության ֆինանսատնտեսական հիմնական ցուցանիշների դրական դինամիկան ընդլայնված վերարտադրություն⁶⁶:

Արտաքին և ներքին կայունության փոխազդեցությամբ ձևավորվում է ամբողջությամբ կազմակերպության կայունությունը: Արտաքին միջավայրը ազդեցություն է ունենում կազմակերպության ներքին կայունության վրա, իսկ ներքին կայունության ձեռքբերումը դրականորեն է ազդում արտաքին միջավայրի վրա՝ ապահովելով արտադրական կազմակերպության համար բարձր մրցունակություն և համապատասխան իմիջ:

Թիվ 1.3.1 գծապատկերում ներկայացրել ենք արտադրական կազմակերպության ներքին կայունության բաղադրիչները:

⁶⁵Песелис А.А. Оценка факторов риска внешней среды при реализации учебного оборудования // Российское предпринимательство. — 2013. — № 3 (225). ст. 31-35.

⁶⁶Паршенцев А.С. ФИНАНСОВАЯ УСТОЙЧИВОСТЬ ПРЕДПРИЯТИЯ // Современные наукоемкие технологии. — 2005. — № 2 ст. 66-67.



Գծապատկեր 1.3.1.

Կազմակերպության ներքին կայունության բնութագրման կառուցվածքային սխեմա⁶⁷

Արտադրական կազմակերպության ներքին կայունության բնութագրման համար էական նշանակություն ունեն տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և ռիսկային բաղադրիչները: Տնտեսական կայունությունը կապվում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության շահութաբերության բարձրացմանը, գործարար ակտիվության աճին, վճարունակության և վարկունակության պահպանմանը, թույլատրելի ռիսկի պայմաններում ներդրումային ակտիվության աճին:

Սոցիալական կայունությունը ցույց է տալիս կազմակերպության անձնակազմի սոցիալական պաշտպանվածության աստիճանը:

Էկոլոգիական կայունությունը կազմակերպության տնտեսական գործունեության փոխկապացումն է նրա էկոլոգիական անվտանգության հետ, շրջակա միջավայրի վրա կազմակերպության արտադրատնտեսական գործունեության վնասակար ազդեցության նվազեցումն է:

Ռիսկային կայունությունը կազմակերպության արտադրողականության և ռիսկերի կառավարման գործընթացները միմյանց փոխկապակցելու այնպիսի կարողությունն է, որն ի գործ է

⁶⁷Գծապատկերը կազմվել է հեղինակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

ապահովել ու կազմակերպել յոլևը գործունեության միջավայրում առկա հնարավոր ռիսկերից:

Ներքին վերահսկողությունը միջոցառումների համակարգ է, որը կազմակերպվում է կազմակերպության ղեկավար անձանց կողմից ու իրագործվում է տնտեսական գործառնությունների իրականացնելու դեպքում բոլոր աշխատողների պարտականությունները առավել արդյունավետ կատարելու նպատակով⁶⁸:

Ներքին վերահսկողությունը ուղղված է տնտեսական գործընթացներն անընդհատ կատարելագործելուն, ինչն էլ համարվում է կազմակերպության կենսագործունեության անհրաժեշտ պայմաններից մեկը:

Մասնագիտական գրականության մեջ ներքին վերահսկողությունը դիտարկվում է երկու տեսանկյունից: Այսպես, ներքին վերահսկողությունն հասկացությունը Վ. Բուրցևի տեսակետի⁶⁹ համաձայն մեկնաբանվում է լայն իմաստով՝ որպես կազմակերպության կառավարման համակարգում ներառվող ենթահամակարգ, որը բաղկացած է միջարժեք տարրերից:

Ե.Պրոկոլովի⁷⁰, Գ.Շրեդերի⁷¹ և Է.Ուտկինի⁷² տեսակետներում ներքին վերահսկողությունը նեղ իմաստով ընդունվում է որպես կառավարման գործընթացի մի փուլ:

Ռ. Ադամսն իր տեսակետում⁷³ ներկայացրել է դասական բնորոշում, որը վերաբերում է առևդիտին՝ առանց առևդիտի չկա հաշիվների հոսսալիություն, իսկ առանց վերջինիս չկա վերահսկողություն: Ներքին առևդիտի միջոցով տրվում է կազմակերպության գործունեության անկախ գնահատականը, որը, պատասխանատվության կենտրոններին համապատասխան ծախսերի նկատմամբ ներտնտեսական վերահսկողությունն է:

Ըստ Վ. Բուրցևի տեսակետի⁷⁴՝ ներքին առևդիտի առումով պետք է

⁶⁸Кыштымова Е.А. Основы аудита: учебное пособие по направлению "Экономика" / Е. А. Кыштымова. – М.: Форум: ИНФРА-М, 2013. ст. 22-27.

⁶⁹Бурцев В. В. Организация системы внутреннего контроля коммерческой организации / В. В. Бурцев. М.: ЭКЗАМЕН, 2000. ст. 15.

⁷⁰Прокушев Е.Ф. Менеджмент первичного уровня. - М.: Дашков и К, 1999. ст. 199-207.

⁷¹Шредер Г.А. Руководить сообразно ситуации. - М.: Интерэксперт, 1994. с.142-145.

⁷²Уткин Э.А. Управление фирмой. - М.: Акалис, 1996. ст. 15-17.

⁷³Адамс Р. Основы аудита. Перевод с английского / Под ред. Я.В.Соколова. М. Аудит, ЮНИТИ 1995. ст. 5-7.

⁷⁴Бурцев В.В. Опыт использования систем внутреннего контроля организаций // Президентский контроль. 2001. № 7. ст. 32-40.

հասկանալ կազմակերպության կառավարման բոլոր օղակների գործունեության ներքին վերահսկողության կազմակերպման ձևը, որն իրականացվում է մասնագիտացված ստորաբաժանման աշխատակիցների կողմից վարչական մասին օգնելու նպատակով:

Հարկ է նշել, որ արդյունաբերական կազմակերպությունների կայուն ու արդյունավետ գործունեության համար առաջանում է ներքին վերահսկողության ու ներքին աուդիտի նոր մոտեցումների կիրառման անհրաժեշտություն:

Պլանային տնտեսության պայմաններում ներքին վերահսկողության համակարգը կողմնորոշված էր ապահովելու կազմակերպության կողմից կառավարման բարձր կանգնած օղակների առաջադրանքները: Սակայն գործնականում գործել է սոցիալ-տնտեսական զրգացման արգելակող մեխանիզմ, ուստի ներքին վերահսկողությունը կրել է ավելի ձևական բնույթ՝ չնպաստելով կազմակերպության զարգացմանը:

Ծուկայական տնտեսակարգի զարգացմանը համահունչ արտադրական կազմակերպությունները որպես ինքնակազմակերպվող սոցիալ-տնտեսական կողմնորոշում ունեցող համակարգ գործում է կոշտ մրցակցության պայմաններում և ունեն տնտեսական ինքնուրույն գործելու լայն հնարավորություններ: Նման պայմաններում արտադրական կազմակերպություններում ներքին վերահսկողության համակարգը պետք է կողմնորոշվի հետևյալ հիմնական ուղղություններով արդյունավետության ապահովմանը՝

- Ծուկայում կազմակերպության կայուն վիճակը,
- Կազմակերպության ֆինանսական վիճակի կայուն զարգացումը,
- Ծուկայական մրցակցությամբ պայմանավորված անընդհատ փոփոխվող արտաքին միջավայրում կազմակերպության արտադրության ու կառավարման համակարգերի ժամանակին հարամարվելը,
- Կազմակերպությունում տեղեկատվության պաշտպանության համակարգի որակը,
- Կազմակերպությունում՝ ներքին վերահսկողության լայն իմաստով և ներքին աուդիտի ներդրմամբ, համակարգերի որակը:

Ներքին վերահսկողության որակի անհրաժեշտությունը և ներգործությունը համարվում են ցանկացած համակարգի

գործունեության արդյունավետության հիմքը: Մասնավորապես, ներքին վերահսկողությանը ներկայացվող պահանջները ներառված են աուդիտի միջազգային ստանդարտ- ISA-220-ում՝ աուդիտորական աշխատանքների որակի վերահսկողությունն բաժնում⁷⁵:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարբեր երկրների արհեստավարժ հաստատությունները թողարկել են աուդիտի ստանդարտներ և դրանք համաձայնացրել են ISA-220-ի սկզբունքներին: Բացառություն է կազմում միայն իտալիայում Collegio Sindacale-ն, որը չի համապատասխանում իր սկզբունքներով ISA-220-ին:

Ըստ եվրոպական փորձագետների տեսակետի՝ ներկայումս գործարար շրջանակներում կազմակերպության ամբողջական ու արդյունավետ կառավարման նպատակով հաճախընդգծվում է որակյալ ներքին աուդիտի կարևորությունը: Մասնավորապես «... Կազմակերպությունները, որոնցում առկա է թույլ ներքին աուդիտ, չեն կարողանում աուդիտորական կոմիտեին տրամադրել բավարարելի տեղեկատվություն: Տեղեկատվական հոսքեր ապահովող համակարգերի արդյունավետությունը և ներքին վերահսկողության համակարգի գնահատումը պետք է իրականացվի անընդհատ...»⁷⁶:

Արտադրական կազմակերպություններում \$ինանսական կայունություն տեսանկյունից ևս ներքին վերահսկողության դերի նշանակությունը կարևորվում է մի շարք պատճառներով՝

- Կազմակերպության զարգացման ռազմավարություն,
- Կապիտալի շուկայից միջոցներ ներգրավելու հնարավորություն,
- Կազմակերպությունների մրցունակության դիրքերի թուլացում,
- Տնտեսական ինտեգրացմանն առաջվող խնդիրներով,
- Շուկայում դիրքավորումը փոփոխելու անհրաժեշտություն,
- Կազմակերպություններում իրականացվող տնտեսական բնույթի աշխատանքների ցածր որակով,
- Արտադրությունում առկա ռեզերվների և գերնորմատիվային

⁷⁵Quality Control for Audit Work”), принятого Международной федерацией бухгалтеров (IFAC) в редакции 1999. р. 17.

⁷⁶Европейская федерация экспертов (Federation dex Experts Comptables Europeens, FEE) "Обеспечение постоянного контроля. Внешний аудит в Европе" // Бухгалтерский учет и аудит. - 2002. - № 3. - ст. 55-62.

պաշարների արդյունավետ վերահսկողության մեխանիզմների կիրառման ցածր արդյունավետությամբ,

- Պատասխանատվության կենտրոնների միջոցով ծախսերի վերահսկողության համակարգերի բացակայությամբ,
- Սնանկացման ռիսկի առկայությամբ և այլն:

Ստորև բերված թիվ 1.3.3 աղյուսակում մեր կողմից տրվել է ՀՀ խիչքների արտադրության կազմակերպչություններում ֆինանսական կայունությունը ներքին վերահսկողության համակարգի ներդրման վերաբերյալ հիմնավորումները և սպասվող ակնկալիքները:

Աղյուսակ 1.3.3

Խիչքներ արտադրող ՀՀ կազմակերպչություններում կայունության ներքին վերահսկողության համակարգի ներդրման հիմնավորումները⁷⁷

Ներքին վերահսկողության կազմակերպման նախարարյալները	Ներքին վերահսկողության ուղղվածությունը	Ներքին վերահսկողության ներդրման առավել ուղյակները
1	2	3
1. ՀՀ տնտեսության աճի ցածր տեմպերը	Կազմակերպչության կողմից գործողությունները, նպատակները, ռազմավարությունը	Կազմակերպչության արդյունավետության պաշտպանության ապահովման ծեռքերի մղումը
2. Ծուկայական մրցակցության սրացումը	Կազմակերպչության գործունեության տեսակները և մաշտաբները	Կազմակերպչության յուրաքանչյուր աշխատակցի նկատմամբ ղեկավարանձանց կողմից վերահսկման քաղաքականության ապահովում
3. Չունենող եկամուտի և կատարված օգտագործողների պահանջը	Գործունեության անորոշությունը և ռիսկը	Կազմակերպչության գործունեության մեջ ժամանակին թերութայունների բացահայտումը և դրանց վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը
4. Արտաքին և ներքին վերահսկողության փոխկապակցվածությունը և փոխադրման ավարտվածությունը	Պայմանագրային կարգապահությունը	Արտադրությունում առկա ռեզերվների, գերնորմատիվային պաշարների բացահայտումն ու կենտրոնացումը
5. Ներքին վերահսկողության հիմնական ուղղությունների կարգավորումը	Կարգային քաղաքականությունը	Սեփականության պահպանության ապահովումը

⁷⁷Աղյուսակը կազմվել է հեղինակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

Այլ ուսակ 1.3.3-ի շարունակությունը

<p>6. Շուկայ ու մ դիրքավորումը փոփոխելու նպատակով կազմակերպության վերակազմակերպումը</p>	<p>Աշխատանքային կոլեկտիվում վեճերը</p>	<p>Աշխատանքների արդյունավետության և որակի բարձրացումը, տնտեսման ռեժիմի բարձրացումը</p>
<p>7. Կազմակերպության նույն համակարգված տնտեսական աշխատանքների բացակայությունը կամ բավարարչի ինտելը</p>	<p>Կառավարման տեղեկատվական և կոմունիկացիոն համակարգերով ապահովվածությունը</p>	<p>Կազմակերպության ղեկավար անձանց կողմից մաքուր տեղեկատվության ստացումը</p>
<p>8. Ցանկացած կազմակերպության համար ներքին վերահսկողության անհարժեշտությունը</p>	<p>Աշխատանքային գործունեության մոտիվացիան</p>	<p>Այն պատճառների և պայմանների բացահայտումը, որոնք նպաստում են կորուստների առաջացմանը և յուրացում մեծի</p>
<p>9. Կազմակերպության և կապիտալի շուկայի զագացման միտումները</p>	<p>Կադրերի արհեստավարժ վերապատրաստումը</p>	<p>Տնտեսական գործընթացների անընդհատ կատարելագործումը</p>
<p>10. Ծախքերի բախումը</p>	<p>Աշխատակիցների իրավունքների և պարտականությունների փաստաթղթային ամրագրումը</p>	<p>Կազմակերպության տնտեսական այլ ծառայությունների աշխատանքների օբյեկտիվ գնահատումը</p>
<p>11. Կազմակերպության եկամուտ տատանալու կողմնորոշումը</p>	<p>Կազմակերպության ստորաբաժանումների միջև փոխարարությունների կարգավորումը</p>	<p>Ներքին վերահսկողության կենտրոնները- պատասխանատվության կենտրոնները</p>
<p>12. Կազմակերպության ֆինանսական ինքնուրույնությունը</p>	<p>Գույքագրման իրականացման կարգը</p>	<p>Ներքին վերահսկողության իրականացման անընդհատությունը</p>
<p>13. Հավոդական տեխնիկայի օգտագործման ցածր արդյունավետությունը</p>	<p>Փաստաթղթաշրջանառության կազմակերպման կանոնները</p>	<p>Աշխատակիցներին խորհրդատվությունները, որոնք մտնում են վերահսկողների իրավասության շրջանակներում</p>
<p>14 Սնանկացման ռիսկը</p>	<p>Արտաքին ազդեցությունը</p>	<p>Կազմակերպության հիմնական ռազմավարությանը հետևելը</p>
<p>15. Կազմակերպության նույն տնտեսման ռեժիմի խախտումը</p>	<p>Հավաստիական հաշվառման տեղեկատվության պաշտպանությունը</p>	<p>Կազմակերպության նույն հատուկ իրավիճակով պայմանավորված աշխատակիցների ծառայողական հետաքննությունները</p>

16. Չհիմնավորված դուրսագրումները	Ապառքների գծով պարտավորությունները	Ակտիվների պահպանումը
----------------------------------	------------------------------------	----------------------

Առաջ արկվածի հետմիասին կարևորում ենք մեր կողմից թիվ 1.3.4 աղյուսակում ներկայացված կազմակերպություններում \$ինանսական կայունության ներքին վերահսկողության հիմնարար տարրերի հիերարխիան:

Յուրաքանչյուր արտադրական կազմակերպությունում \$ինանսական կայունության ներքին վերահսկողության հիմնական նպատակը կայուն զարգացման ապահովումն է, այնպիսի \$ինանսական քաղաքականության իրականացումը, որը կապահովի ցանկալի շահույթի ստացմանը և կազմակերպության \$ինանսական անկախության ապահովմանը:

Աղյուսակ 1.3.4

\$ինանսական կայունության ներքին վերահսկողության հիմնարար տարրերը⁷⁸

Կազմակերպության \$ինանսական կայունության ռազմավարական նպատակը
Կազմակերպության \$ինանսական կայունության լրացուցիչ նպատակը
Կազմակերպության \$ինանսական կայունության գործառնական նպատակը
Կազմակերպության \$ինանսական կայունության որակական բնութագրիչները և պահանջվող տեղեկատվությանը
Կազմակերպության \$ինանսական կայունության ներքին վերահսկողության սկզբունքները
Կազմակերպության \$ինանսական կայունության ներքին վերահսկողության նորմատիվները
Կազմակերպության \$ինանսական կայունության ներքին վերահսկողության նորմատիվների մեկնաբանումը
\$ինանսական կայունության ներքին իրականացնող մասնագետների կողմից վերահսկողության տարբեր իրավիճակների փորձի կիրառումը

\$ինանսական կայունության ներքին վերահսկողության լրացուցիչ նպատակն է աուդիտի համար անհրաժեշտ տեղեկատվության նախապատրաստումը, \$ինանսական կայունության վերահսկողության ամբողջական աշխատակիցների համար խորհրդատվության իրականացումը:

⁷⁸Աղյուսակը կազմվել է հեղինակի ուսումնասիրության ադրյունքների հիման վրա:

Ֆինանսական կայունության ներքին վերահսկողության գործառնական նպատակն է շահույթի ստացման մասով գործառնական, վիճակագրական ու հաշվապահական հաշվառման ուղղությամբ փորձաքննության հուսալիության ապահովումը:

Ընդհանուր առմամբ, արտադրական կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի կատարելագործումը առավել արդյունավետ մոտեցումների, մեթոդների, ձևերի ու ուղիների հիմնավորման ու իրացման անընդհատ գործընթաց է, որն անմիջականորեն պայմանավորված է ներքին ու արտաքին պայմաններով: Այսպիսով՝ արտադրական կազմակերպության ներքին վերահսկողության ճկունության բարձրացման համար կարևորում ենք հետևյալը՝

- Արտաքին և ներքին միջավայրերի պայմանների փոփոխության վերաբերյալ ստացվող տեղեկատվության արագությունը և հավաստիությունը,
- Ներքին վերահսկողության համակարգի օպերատիվ գործունեությունը ու կարգավորումը, ինչը պետք է ապահովվի հատուկ ստորաբաժանման ձևավորման միջոցով,
- Ներքին վերահսկողությամբ զբաղվող աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման միջոցով,
- Վերահսկողության մեթոդների արագ կողմնորոշումը,
- Տնօրինվող ռեսուրսները արագ մանևերել ու հնարավորությունները:

Հետևաբար տնտեսական ինտեգրացման ներկա փուլում հայրենական արտադրական կազմակերպության ներքին և մասնավորապես խմիչքների արտադրությունն իրականացնողները ստիպված կլինեն ապահովել ու ներքին վերահսկողության համակարգի տարրերի հաշվեկշռվածությունը այնպես, որպեսզի հնարավոր լինի առավել արդյունավետ ձևով օգտագործել կազմակերպության ներուժը և բարձրացնել նրա մրցունակությունը:

ԳԼ ՈՒ Խ2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒ ԹՅԱՆ ՎԵՐԼ ՈՒ ԾՈՒ ԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒ ԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒ ՄԼԵՐԸ ԽԻՉՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ ԹՅՈՒՆՆԵՐՈՒ Մ

2.1. Ֆինանսական կայ ու նու թյ ան գործոնայ ի ն վերլ ու ծ ու թյ ու ն ը և լ ու ծ մ ան ե ն թ ա կ ա խ ն դ ի թ ն ե թ ը

Կազմակերպության ֆինանսական կայ ու ն ու թյ ու ն ը համարվում է ազգային տնտեսական համակարգի արդյունավետ զարգացման կարևոր պայմանը: Երկրի և նրա տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կայ ու ն ու թյ ան տեսական և կիրառական բնույթի հիմնախնդիրների նշանակությունը որոշվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների, ներքին և արտաքին գործոնների ազդեցության հանրագումարի արդյունքում:

Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսների արդյունավետ կառավարումը նպաստում է ոչ միայն նրանց կայ ու ն ու թյ ան ը և զարգացմանը, այլև ապահովում է պետության հարկային եկամուտների ավելացմանը⁷⁹:

Ինչ վերաբերում է սույն հետազոտության շրջանակներում խմիչքներ արտադրող կազմակերպությունների, ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, հիմնական ցուցանիշներին, ապա դրանք ներկայացվել են ստորև բերված թիվ 2.1.1 աղյուսակում: Բերված տվյալներից հետևում է, որ արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների ծավալը համադրելի գներով 2016թ. 2015թ. նկատմամբ դրսևորել է 0.7 տոկոս աճի միտում, իսկ նույն ցուցանիշը ընթացիկ գներով նույն ժամանակահատվածում աճել է 10.3 տոկոսով: Հատկանշական է, որ 5.4 տոկոս աճ է ապահովվել նաև պատրաստի արտադրանքի իրացումը համապատասխան տարվա ընթացիկ գներով ցուցանիշի գծով: Տվյալ ցուցանիշի մասով հիմնական ծանրությունը ընկել է այլ երկներ արտահանված խմիչքներ արտադրատեսակներին՝ աճը կազմել է 31.7 տոկոս, իսկ ԱՊՀ երկների գծով ընդամենը՝ 0.7:

⁷⁹Бобрис А.О., Решетько Н.И. Формирование механизмов развития предпринимательских структур в условиях конкуренции. Вестник Университета (Государственный университет управления). 2011. № 17. ст. 113-118.

Խմիչքների արտադրության ճյուղի կազմակերպչությունների հիմնական ցուցանիշները՝ ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման⁸⁰

	Ցուցանիշները	Փաստացի		Աճի տեմպ, %-ով
		2016թ.	2015թ.	
1	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների ծավալը համադրելի գներով /հազ. դրամ/)	3920136	3892966	100.7
2	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների ծավալը ընթացիկ գներով /հազ. դրամ/)	4297285	3892966	110.3
3	Պատրաստի արտադրանքի իրացումը համապատասխան տարվա ընթացիկ գներով /հազ. դրամ/, որից	3961007	3759835	105.4
3.1	ԱՊՅ երկներում	1239483	1230988	100.7
3.2	Այլ երկրներում	427467	324464	131.7

Խմիչքների արտադրության ճյուղում հիմնական արտադրատեսակների թողարկման համեմատական վերլուծությունը 2016թ. 2015թ. նկատմամբ ներկայացվել է թիվ 2.1.2 այլ ու սակում: Հարկ է նկատել, որ թողարկման ծավալի աճ ապահովվել է սահամանափակ արտադրատեսակների գծով, մասնավորապես՝ 12.5 տոկոս աճ է ապահովվել էթիլային սպիրտի, 4.4 տոկոս կոնյակի, 2.4 անգամ վիսկիի, 3.5 անգամ շամպայն գինիի և 6.7 տոկոս աղբյուր ջրի գծով: Մտահոգող է տոմատի հյուսիս արտադրատեսակի գծով անկումը՝ 2016թ. 2015թ. նկատմամբ այս արտադրատեսակի գծով թողարկումը նվազել է 89.9 տոկոսով: Այս առումով չափաք է մոռանալ կարևոր հանգամանք, որ լուրիկը Արարատյան դաշտավայրի հիմնական արտադրատեսակներից է, իսկ դրավրա հիմնված արտադրությունների ծավալների նմանաբնույթ կրճատումը բիզնեսի առումով խիստ մտահոգիչ է: Մեր կարծիքով. ահազանգող է նաև գինու, օղու, լիկյորի և մրգաշյութերի ծավալների կրճատումը, ինչը կապված է մեծ մասամբ ՌԴ ռուբլու հետկապված անկայուն դրսևորումներով, որն էլ իր բացասական ազդեցությունն է ունենում ՀՀ դրամի փոխարժեքի և այս խմիչքների արտադրության ճյուղի կազմակերպչությունների ֆինանսական վիճակի վրա:

Արձանագրված ցուցանիշներն իրենց դրական և բացասական ազդեցություններն են դրսևորել խմիչքների արտադրության

⁸⁰ՀՀ ԱՎԾ Արդյունաբերական կազմակերպչությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, Վիճակագրական տեղեկագիր, Երևան 2016թ., Տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-201, էջ 5:

ճյուղի կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա, ինչը կփորձենք համեմատական վերլուծության ենթարկել առաջարկվող գործոնային գնահատման համակարգի միջոցով:

Այլ ուսակ 2.1.2

Ոչ ալ կոհոլային և ալ կոհոլային արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ⁸¹

<i>Խմիչքների արտադրատեսակների արտադրող ու ն</i>	Չափման միավորը	<i>Փաստացի թողարկումը</i>		2016թ. հունվարը 2015թ. հունվարի նկատմամբ, %-ով
		2016թ.	2015թ.	
Բնական հյութեր -ընդամենը	հազ.լիտր	557,5	834,9	66,8
այդ թվում՝				
մրգահյութեր	հազ.լիտր	553,7	797,2	69,5
տոմատի հյութեր	հազ.լիտր	3,8	37,7	10,1
Էթիլային սպիրտ (ապրանքային)	հազ.լիտր	22,5	20,0	112,5
Օղի և օղու-լիկյորի արտադրանք	հազ.լիտր	538,5	691,1	77,9
այդ թվում՝				
օղի	հազ.լիտր	537,0	689,1	77,9
լիկյոր	հազ.լիտր	1,5	2,0	75,0
Կոնյակ	հազ.լիտր	637,0	610,3	104,4
Վիսկի	հազ.լիտր	126,4	52,1	2.4 անգամ
Գինի	հազ.լիտր	247,9	378,6	65,5
Շամպայն գինի	հազ.լիտր	25,2	7,2	3.5 անգամ
Գարեջուր	հազ.լիտր	448,8	584,4	76,8
Ոչ ալկոհոլային խմիչքներ	հազ.լիտր	2813,3	2910,0	96,7
Հանքային ջրեր	հազ.լիտր	1420,2	1563,7	90,8
Աղբյուրի ջուր	հազ.լիտր	1379,0	1291,9	106,7

Ընդհանուր առմամբ ֆինանսական կայունության գնահատման տարաբնույթ մոտեցումներից ներկա պայմաններում կարևոր նշանակություն են ստացել հատկապես գործոնային գնահատման համալիր մոտեցումները⁸²: Այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ ֆինանսական դրության գնահատման գործընթացն առավել արդյունավետ բնույթ է կրում ամբողջական համակարգի կիրառման

⁸¹ՀՀ ԱՎԾ Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ, Վիճակագրական տեղեկագիր, Երևան 2016թ., Տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-202, Էջեր 5-6:
⁸²Когденко В.Г., Крашенинникова М.С. Особенности анализа новых форм бухгалтерской отчетности (баланс и отчет о прибылях и убытках) // Экономический анализ: теория и практика. 2012. № 18. ст. 21-32. Ильшева, Н.Н. Анализ финансовой отчетности / Н.Н. Ильшева, С.И. Крылов. – М.: Финансы и статистика, Инфра - М, 2011. 412 с.

դեպքում⁸³: Այս տեսանկյունից համալիր մոտեցման բաղադրիչներից կարևորում ենք մատրիցային մեթոդի կիրառումը ևս:

Մատրիցային մեթոդը՝ որպես գրաֆիկական վերլուծության ձև, իրենից ներկայացնում է իրական դրսևորումների, գործընթացների, հարաբերությունների, օբյեկտների, ընթացակարգերի տրամաբանական նմանակում և դրանց տարածական (ինչպես սահմանված է կոորդինատներով) դիրքավորում՝ արտացոլելով ներքին պատճառահետևանքային կապերը, համամասնությունները, ուժերն ու գործոնները, որոնք բնութագրում են օրինաչափությունները և զարգացման միտումները: Մատրիցան ունի քարտեզի տեսք, որը կոնկրետ սյուներով և տողերով աղյուսակ է: Վերլուծական և վերահսկողական տեսանկյունից մատրիցների մեթոդի կիրառման դեպքում աղյուսակի կոնկրետ վանդակները կատարում են մասշտաբային կողմնորոշիչի դեր: Դրանց միջոցով ցույց են տրվում որոշված ֆունկցիաների և հետազոտվող օբյեկտի բնութագրերը կամ դրանց դրսևորման մակարդակները: Հաճախ օգտագործվում են համեմատական կատեգորիաներ՝ ուժեղ, միջին, թույլ, առավել թույլ տեսքով: Սյուների և տողերի հատման յուրաքանչյուր կետում ֆիքսվում է օբյեկտի ընթացիկ վիճակը, նրա դիրքը աղյուսակի դաշտում: Յուրաքանչյուր դիրք ունենում է համալիր նկարագիր, որն արտացոլում է երկու կամ մի քանի գործոնների գործողության համադրությունը:

Մատրիցային մեթոդը որոշակի առումով պայմանական է, սակայն բավարար համարժեքությամբ ներկայացնում է այլընտարնաբային ռազմավարական ուղղությունները, հավանական կապերն ու ազդեցությունները, քանի որ հիմնվում է կազմակերպության հաշվառման, հաշվետվությունների կոնկրետ վերլուծության վրա, հնարավորություն է ընձեռում համեմատելու գործընթացի դինամիկան և բացահայտելու զարգացման միտումները: Նշվածի համառոտությամբ մատրիցային մեթոդի անվիճելի առավելություններից կարևորվում են հետևյալները՝

- Կոնկրետ արտադրատնտեսական վիճակին, ժամանակի փոփոխության ուսուրսային հնարավորությունների կապվածությունը:

⁸³ Анализ инвестиционной привлекательности организаций / Ендовицкий Д.А., Бабушкин В.А., Батурина Н.А. и др. – М.: КНОРУС, 2010. 376 с. Ильшева, Н.Н. Анализ финансовой отчетности / Н.Н. Ильшева, С.И. Крылов. – М.: Финансы и статистика, Инфра - М, 2011. 412 с.

Աղյուսակի դաշտում ֆիքսվում են կազմակերպության զարգացման այլ ընտրանքային տարբերակները, համակարգի թույլ և ուժեղ կողմերը:

- Չարգացման ռեզերվների վերլուծական ախտորոշման հնարավորությունը, սահմանափակ ռեսուրսների բաշխման օպտիմալացումը և ռազմավարական կանխատեսումը:
- Բազմաֆունկցիոնալ բնույթը, իրազեկումը, փաստարկները, նկարագրումը, վերահսկողությունը, պլանավորումն ու կանխատեսումը, որոշումների փնտրումն ու հիմնավորումը, համեմատական գնահատումը, վերլուծությունը և ախտորոշումը:
- Իրավիճակային վերլուծության ընթացակարգերի տեսանելիությունն ու տրամաբանությունը, նախապատասխան փաստարկները, արհեստավարժ քննարկումների հիմնավորումները, կառավարչական որոշումների ընդունումը:
- Հասանելիությունը, ընկալման պարզությունը, տեղեկացվածությունը:

Մատրիցային մեթոդը աստիճանաբար լայն կիրառում է ստացել մենեջմենթում, մարքեթինգում, տնտեսական վերլուծություններում: Մասնավորապես Ա. Կորոտկովը⁸⁴ առաջարկել է շուկայի վիճակի և զարգացման գնահատման նպատակով ներքին և արտաքին մատրիցներ՝ ներառելով դրանցում իր կողմից էական նշանակություն ստացած ցուցանիշները: Բիզնես գործընթացների, ապրանքների և անձնակազմի՝ որպես տնտեսական բնույթի օբյեկտների գնահատման նպատակով մատրիցների մեթոդի կիրառմամբ իրենց լուծումներն են առաջարկել Գ.Վ. Լոզինովն ու Ե.Վ. Պոպովը⁸⁵:

Միջազգային գործընթացում լայն ճանաչում ունի Բոստոնյան խորհրդատվական խմբի կողմից մշակված մատրիցան, որը արդյունավետ ձևով օգտագործվում է կազմակերպության արտադրանքի պրոտֆելի վերլուծության ու պլանավորման նպատակով: Մասնավորապես, շեշտադրվում են կոնկրետ

⁸⁴Коротков. А. Стратегические матрицы как объект и инструмент классификации // Маркетинг. 2004. №4. ст. 89–99.

⁸⁵Попов Е.В., Логинов Г.В. Матричные методы стратегического планирования деятельности компании // Маркетинг в России и за рубежом. 2004. №2. ст. 3–15.

ապրանքախմբերի գծով եկամուտների հոսքերը և վնասները⁸⁶: Մեր կողմից մատրիցային մեթոդը կօգտագործվի ֆինանսական վիճակը բնութագրող նախնական, միջանկյալ և վերջնական քարտեզներ կազմել ու նախատկով:

Հաշվի առնելով հիմնախնդրի կարևորությունը՝ ՀՀ խմիչքների արտադրության հետազոտված կազմակերպությունների ֆինանսական կայունությունը գործոնային համակարգի միջոցով վերլուծելու և գնահատելու համար առաջարկել ենք հետևյալ մոտեցումը՝

- Հետազոտվող կազմակերպությունների համար հաշվարկում ենք ֆինանսական վիճակի բաղադրիչները բնութագրող գործակիցների արժեքները⁸⁷:
- Ֆինանսական դրություն բաղադրիչների համար հաշվարկում ենք յուրաքանչյուր գործակցի կշռային ազդեցությունը, որից հետո կառուցվում է ֆինանսական դրության բաղադրիչների գծով գումարային գնահատականների որոշման ռեգրեսիոն հավասարումները՝ ըստ
 - կապիտալով ապահովվածություն,
 - վճարունակություն,
 - իրացվելիություն,
 - գործարար ակտիվություն,
 - շահութաբերություն:
- Կառուցվում է կազմակերպությունների ֆինանսական վիճակի ընդհանրացված գնահատականի հաշվարկման ռեգրեսիոն հավասարումը:
- Որոշվում է կազմակերպությունների ֆինանսական վիճակը՝ ըստ կայունության գոտիների և հստակեցվում են ֆինանսական վիճակի բաղադրիչների կարգավորման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները:

Առաջին քայլ. հետազոտվող կազմակերպությունների համար հաշվարկում ենք ֆինանսական վիճակի բաղադրիչներում ներառված գործակիցների մեծությունները.

- **Կապիտալով ապահովվածության բաղադրիչը բնութագրելու**

⁸⁶Ефремов В.С. Классические модели стратегического анализа и планирования: Модель BCG // Менеджмент в России и за рубежом. 1997. Июль–август. ст. 80–86.

⁸⁷Բոլոր այն ցուցանիշները, որոնք վերցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններից, հաշվարկվել են միջին տարեկան արժեքներով:

համար նախընտրելի ենք համարել հետևյալ գործակիցները.

ԿԱ₁՝ Ֆինանսական անկախության` սեփական կապիտալ /հաշվեկշռի հանրագումար ,

ԿԱ₂՝ Կապիտալ իլևերեջի` փոխառու կապիտալ /սեփական կապիտալ ,

ԿԱ₃՝ Ֆինանսական կախվածությունն` ընդհանուր

պարտավորություններ/հաշվեկշռի հանրագումար

ԿԱ₄՝ Կապիտալի մանրևայնությունն` սեփական ընթացիկ

ակտիվներ/սեփական կապիտալ :

Վերոհիշյալ գործակիցների հաշվարկային արժեքները մեր կողմից հետազոտված կազմակերպությունների համար ներկայացրել ենք թիվ 2.1.3 աղյուսակում:

➤ Վճարունակությունն բաղադրիչը բնութագրելու համար նախընտրելի ենք համարել հետևյալ գործակիցները`

ՎՃ₁` Պարտավորությունների գումար /ակտիվների գումար ,

ՎՃ₂` Երկարաժամկետ պարտավորություններ/ (երկարաժամկետ պարտավորություններ+սեփական կապիտալ),

ՎՃ₃` դեբիտորական պարտքեր վաճառքերի գծով /կրեդիտորական պարտքեր գնումների գծով:

Աղյուսակ 2.1.3

Կապիտալ ով ապահովվածության բաղադրիչը բնութագրող գործակիցների հաշվարկային մեծությունները⁸⁸

Կազմակերպություններ	ԿԱ ₁	ԿԱ ₂	ԿԱ ₃	ԿԱ ₄
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմաԲԲԸ	0,866	0,154	0,134	0,407
«Վեդի ալ կո» ՓԲԸ	0,278	2,598	0,722	2,157
Երևանի Արարատ Կոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ	0,112	7,953	0,888	4,824
Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ	0,424	1,36	0,576	0,67
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	0,771	0,297	0,229	0,858
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	0,151	5,627	0,849	5,347
«ԱրմենիաՎայն» Գործարան ՍՊԸ	0,021	47,674	0,979	14,2
«Ալ ֆաֆուդ սերվիս» ՍՊԸ	0,21	3,759	0,79	0,716
«Պլազասիստեմս» ՓԲԸ	-0,35	-3,855	1,35	1,335
«Ունիվերսալ-Օրդեր» ՍՊԸ	-0,107	-10,302	1,107	1,005
«Սիսնատուրալ» ՓԲԸ	0,517	0,935	0,483	1,08
«Թամարան Անի» ՍՊԸ	-0,095	-11,496	1,095	-1,181

⁸⁸Որպես տեղեկատվական բազա է ծառայել հետազոտված կազմակերպությունների 2015թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

Վճարում նակույթ ան գործակիցների հաշվարկային արժեքները հետազոտված կազմակերպությունների համար ներկայացրել ենք թիվ 2.1.4 աղյուսակում:

Աղյուսակ 2.1.4

Վճարում նակույթ ուն բաղադրիչ ը բնութագրող գործակիցների հաշվարկային մեծույթ ու նները⁸⁹

Կազմակերպություններ	Վճ ₁	Վճ ₂	Վճ ₃
Երևանի «ՎԱ»ն արտադրական ֆիրմաԲԲԸ	0,134	0,117	0,498
«Վեդի ալկո» ՓԲԸ	0,722	0,607	0,948
Երևանի Արարատկոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ	0,888	0,873	7,391
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ	0,576	0,504	1,878
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	0,229	0,112	6,726
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	0,849	0,836	1,11
«ԱրմենիաՎայն» գործարան ՍՊԸ	0,979	0,957	0
«ԱլֆաՖուդսերվիս» ՍՊԸ	0,79	0,006	0,752
«Պլազասիստեմս» ՓԲԸ	1,35	-1,062	4,188
«Ունիվերսալ-Օրդեր» ՍՊԸ	1,107	-0,004	0,139
«Սիսնատուրալ» ՓԲԸ	0,483	0,412	3,314
«Թամարան Անի» ՍՊԸ	1,095	1,131	2,323

➤ **Իրացվել իույթ ուն բաղադրիչ ը բնութագրել ու համար նախընտրել ի ենք համարել հետևյալ գործակիցները.**

- Ի₁: ընթացիկ իրացվել իույթ ան գործակից՝ (ընթացիկ ակտիվներ-դեբիտորական պարտքեր)/կարճաժամկետ պարտավորություններ,
- Ի₂: ակնթարթային իրացվել իույթ ան գործակից՝ դրամական միջոցներ/կարճաժամկետ պարտավորություններ,
- Ի₃: բացարձակ իրացվել իույթ ան գործակից՝ (դրամական միջոցներ+կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ)/կարճաժամկետ պարտավորություններ,
- Ի₄: նյութական ծածկման գործակից՝ պաշարներ/կարճաժամկետ պարտավորություններ:

Իրացվել իույթ ան գործակիցների հաշվարկային արժեքները հետազոտված կազմակերպությունների համար ներկայացրել ենք թիվ 2.1.5 աղյուսակում:

Աղյուսակ 2.1.5

Իրացվել իույթ ուն բաղադրիչ ը բնութագրող գործակիցների

⁸⁹Որպես տեղեկատվական բազա է ծառայել հետազոտված կազմակերպությունների 2015թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

հաշվարկային մեծությունները⁹⁰

Կազմակերպություններ	h ₁	h ₂	h ₃	h ₄
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմաԲԲԸ	19,52	5,02	5,02	19,93
«Վեդի ալկո» ՓԲԸ	2,19	0,03	0,03	3,05
Երևանի Արարատկոնյան պի-գինուկոմբինատԲԲԸ	4,02	0,16	0,16	5,43
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ	2,04	0,01	0,01	2,96
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	3,86	0,27	0,27	6,01
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	10,35	0,18	0,18	11,26
«Արմենիավայն» գործարան ՍՊԸ	1,56	0,01	0,01	1,56
«Ալֆաֆուդսերվիս» ՍՊԸ	0,88	0,14	0,14	1,19
«Պլազասիստեմս» ՓԲԸ	0,54	0,1	0,1	0,6
«Ունիվերսալ-օրդեր» ՍՊԸ	0,84	0,25	0,32	0,9
«Սիսնատուրալ» ՓԲԸ	2,18	0,04	0,04	5,64
«Թամարան Անի» ՍՊԸ	1,08	0,01	0,13	1,41

➤ Գործարար ակտիվությունն բաղադրիչը բնութագրելու համար նախընտրելի ենք համարել հետևյալ գործակիցները.

ԳԱ₁՝ իրացուցից գուտհասույթ/ակտիվներ,

ԳԱ₂՝ իրացուցից գուտհասույթ/սեփական կապիտալ,

ԳԱ₃՝ իրացուցից գուտհասույթ/հիմնական միջոցներ,

ԳԱ₄՝ իրացուցից գուտհասույթ/ընթացիկ ակտիվներ,

ԳԱ₅՝ իրացուցից գուտհասույթ/դեբիտորական պարտքեր,

ԳԱ₆՝ իրացուցից գուտհասույթ/պաշարներ:

Գործարար ակտիվության գործակիցների հաշվարկային արժեքները ներկայացրել ենք թիվ 2.1.6 աղյուսակում:

Աղյուսակ 2.1.6

Գործարար ակտիվությունը բնութագրող գործակիցների հաշվարկային մեծությունները⁹¹

Կազմակերպություններ	ԳԱ ₁	ԳԱ ₂	ԳԱ ₃	ԳԱ ₄	ԳԱ ₅	ԳԱ ₆
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա ԲԲԸ	0,15	0,17	9,39	0,41	19,95	0,56
Վեդի ալկո ՓԲԸ	0,52	1,88	5,56	0,59	2,07	0,84
Երևանի Արարատկոնյան պի-գինուկոմբինատ ԲԲԸ	0,32	2,83	1,1	0,48	1,84	0,67
Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ	0,35	0,82	0,61	0,81	2,62	1,18
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	0,68	0,89	3,31	0,86	2,41	1,53

⁹⁰Որպես տեղեկատվական բազա է ծառայել հետազոտված կազմակերպությունների 2015թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

⁹¹Որպես տեղեկատվական բազա է ծառայել հետազոտված կազմակերպությունների 2015թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

Ավշարի գինու գործարան ՍՊԸ	0,3	1,98	2,72	0,34	4,18	0,38
«Արմենիավայն» Գործարան ՍՊԸ	0,03	1,25	0,16	0,03	131,14	0,03
«Ալ ֆաֆուդ» Սերվիս ՍՊԸ	0,64	3,05	11,7	0,68	2,65	1,94
«Պլ ազասիստեմս» ՓԲԸ	1,24	-3,53	4,38	1,76	17,47	13,6
«Ունիվերսալ -օրդեր» ՍՊԸ	0,27	-2,47	530,09	0,27	3,9	1,28
«Սիսնատուրալ» ՓԲԸ	0,88	1,71	2,74	1,3	2,12	3,59
«Թամարան Անի» ՍՊԸ	1,55	-16,23	2,51	4,02	16,84	6,09

➤ **Շահույթաբերություն և բաղադրիչը բնութագրելու համար նախընտրելի ենք համարել հետևյալ գործակիցները.**

ՇԲ₁ Ակտիվների շահույթաբերություն և գործակից՝ զուտ շահույթ/ակտիվներ

ՇԲ₂ Սեփական կապիտալի շահույթաբերություն և գործակից՝ զուտ շահույթ/սեփական կապիտալ ,

ՇԲ₃ Վաճառքի շահույթաբերություն և գործակից՝ իրացումից շահույթ/իրացումից զուտ հասույթ:

Շահույթաբերության գործակիցների հաշվարկային արժեքները հետազոտված կազմակերպությունների համար ներկայացրել ենք թիվ 2.1.7 աղյուսակում:

Աղյուսակ 2.1.7

Շահույթաբերություն և նրա բնութագրող գործակիցների հաշվարկային մեծությունները⁹²

Կազմակերպություններ	ՇԲ ₁	ՇԲ ₂	ՇԲ ₃
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա ԲԲԸ	0,027	0,031	0,13
Վեդիալ կո ՓԲԸ	-0,013	-0,047	0,125
Երևանի Արարատկոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ	0,019	0,169	0,171
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ	0,01	0,023	-0,024
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	0,058	0,075	0,106
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	0,022	0,148	0,1
«Արմենիավայն» Գործարան ՍՊԸ	0,023	1,139	0,912
«Ալ ֆաֆուդ սերվիս» ՍՊԸ	0,143	0,679	0,225
«Պլ ազասիստեմս» ՓԲԸ	0,65	-1,854	0,8
«Ունիվերսալ -օրդեր» ՍՊԸ	0,129	-1,2	0,534
«Սիսնատուրալ» ՓԲԸ	0,016	0,032	0
«Թամարան Անի» ՍՊԸ	0,08	-0,84	0,1186

⁹²Որպես տեղեկատվական բազա է ծառայել հետազոտված կազմակերպությունների 2015թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալները:

Հիմնվելով Ա. Մաթևոսյանի առաջարկած մոտեցման⁹³ վրա՝ ստորև կազմել ենք մեր կողմից հետազոտված կազմակերպությունների համար նախնական ֆինանսական վերահսկողության ալյուսակը՝ ըստ գումարային գնահատականների, ֆինանսական դրության հինգ բաղադրիչների գծով:

Ալյուսակ 2.1.8

Կապիտալով ապահովվածության բաղադրիչի գծով նախնական ֆինանսական վերահսկողության ալյուսակ

Կազմակերպություններ	ԿԱ ₁	ԿԱ ₂	ԿԱ ₃	ԿԱ ₄	ΣԿԱ
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմաԲԲԸ	max 0,866		min 0.134		1,561
Վեդի ալյումինիումի ֆաբրիկա					5,755
Երևանի Արարատկոնյան ալյումինիումի-գինու կոմբինատԲԲԸ					13,776
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ					3,031
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ					2,154
Ավշարի գինու գործարան ՍՊԸ					11,974
«Արմենիավայն» գործարան ՍՊԸ		max 47.674		max 14.2	max 62,874
«Ալֆաֆոնդ» Սերվիս ՍՊԸ					5,475
«Պլազասիստեմս» ՓԲԸ	min -0.35		max 1.35		-1,52
Ունիվերսալ-օրդեր ՍՊԸ					-8,298
«Սիսնատուրալ» ՓԲԸ					3,014
«Թամարան Անի» ՍՊԸ		min -11.496		min -1.181	min -11,677

Ալյուսակ 2.1.9

Վճարունակությունների բաղադրիչի գծով նախնական ֆինանսական վերահսկողության ալյուսակ

Կազմակերպություններ	ՎՃ ₁	ՎՃ ₂	ՎՃ ₃	ΣՎՃ
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա ԲԲԸ	min 0.134			min 0,749
Վեդի ալյումինիումի ֆաբրիկա				2,277
Երևանի Արարատկոնյան ալյումինիումի-գինու կոմբինատԲԲԸ			max 7.391	max 9,152
Երևանի շամպայն գինիների				2,959
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ				7,067
Ավշարի գինու գործարան ՍՊԸ				2,796
«Արմենիավայն» գործարան ՍՊԸ			min 0.0004	1,937
«Ալֆաֆոնդ» Սերվիս ՍՊԸ				1,548
«Պլազասիստեմս» ՓԲԸ	max 1.35	min -1.062		4,476
«Ունիվերսալ-օրդեր» ՍՊԸ				1,242
«Սիսնատուրալ» ՓԲԸ				4,209

⁹³ Մաթևոսյան Ա. Ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ արդյունաբերական կազմակերպություններում: Մենագրություն, Երևան 2011, Ոսկան Երևանցի, Էջեր 231-252:

«Թամարան Անի» ՍՊԸ		max1,131		4,549
-------------------	--	----------	--	-------

Այլ ուսակ 2.1.10

Իրացվել ի ու թյ ու ն բաղադրիչի գծով նախնական ֆինանսական վերահսկողության այլ ուսակ

Կազմակերպության ու ներ	h ₁	h ₁	h ₃	h ₄	Σh
Երևանի ՎԱՆ արտադրական ֆիրմաԲԲԸ	max 19.52	max 5.02	max 5.02	max 19.93	max 49,49
Վեդի ալ կո ՓԲԸ					5,3
Երևանի ԱրարատԿոնյ ալի-գինու կոմբինատԲԲԸ					9,77
Երևանի Շամայյ ն գինիների գործարան ԲԲԸ					5,02
Պռոշյանի կոնյ ալի գործարան ՍՊԸ					10,42
Ավշարի գինու գործարան ՍՊԸ					21,98
Արմենիավայ ն Գործարան ՍՊԸ					3,13
Ալ ֆաֆոնդ Սերվիս ՍՊԸ					2,36
Պլ ազասիստեմս ՓԲԸ	min 0.54	min 0.01	min 0.01	min 0.6	min 1,34
Ու նիվերսալ -օրդեր ՍՊԸ					2,31
Սիս նատուրալ ՓԲԸ					7,9
Թամարան Անի ՍՊԸ					2,63

Այլ ուսակ 2.1.11

Գործարար ակտիվություն ն բաղադրիչի գծով նախնական ֆինանսական վերահսկողության այլ ուսակ

Կազմակերպության ու ներ	ԳԱ ₁	ԳԱ ₂	ԳԱ ₃	ԳԱ ₄	ԳԱ ₅	ԳԱ ₆	ΣԳԱ
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմաԲԲԸ							30,63
Վեդի ալ կո ՓԲԸ							11,46
Երևանի Արարատկոնյ ալի-գինու կոմբինատԲԲԸ					min 1.84		7,23
Երևանի Շամայյ ն գինիների գործարան ԲԲԸ							min 6,39
Պռոշյանի կոնյ ալի գործարան ՍՊԸ							9,68
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	min 0.03						9,9
«Արմենիավայ ն» Գործարան ՍՊԸ			min 0.16	min 0.03	max 131.14	min 0.003	132,64
«Ալ ֆաֆոնդ» Սերվիս ՍՊԸ		max 3.049					20,66
«Պլ ազասիստեմս» ՓԲԸ						max 13.6	34,91
«Ու նիվերսալ -օրդեր» ՍՊԸ							max

«Սիս նատուրալ» ՓԲԸ							12,34
«Թամարան Անի» ՍՊԸ	max 1.55	min -16.23	max 530.09	max 4.02			14,78

Աղյուսակ 2.1.12

Շահութաբերությունն բաղադրիչի գծով նախնական ֆինանսական վերահսկողության աղյուսակ

Կազմակերպություններ	ՃԲ ₁	ՃԲ ₂	ՃԲ ₃	ΣՃԲ
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմաԲԲԸ				0,188
Վեդի ալկո ԲԲԸ	min -0.013			0,065
Երևանի Արարատկոնյան կի-գինու կոմբինատ ԲԲԸ				0,359
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ			min -0.024	0,009
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ				0,239
Ավշարի գինու գործարան ՍՊԸ				0,27
«Արմենիավայն» գործարան ՍՊԸ		max 1.139	max 0.912	max 2,075
«Ալֆաֆուդ» Սերվիս ՍՊԸ				1,047
«Պլազասիստեմս» ՓԲԸ	max 0.65	min -1.854		-0,404
«Ունիվերսալ-օրդեր» ՍՊԸ				-0,537
«Սիս նատուրալ» ՓԲԸ				0,048
«Թամարան Անի» ՍՊԸ				min -0,641

Ըստ կազմված նախնական ֆինանսական վերահսկողության աղյուսակների կապիտալով ապահովվածությունն բաղադրիչի գծով վատագույն գումարային գնահատական ստացել է «Թամարան Անի» ՍՊԸ-ն՝ -11.677, իսկ լավագույն գնահատական՝ «Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ-ն՝ 62.874:

Վճարունակությունն բաղադրիչի գծով վատագույն գումարային գնահատական ստացել է Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմաԲԲԸ-ն՝ 0,749, իսկ լավագույն գնահատական՝ «Երևանի Արարատ կոնյակի-գինու կոմբինատ» ԲԲԸ -ն՝ 9.152:

Իրացվելիությունն բաղադրիչի գծով վատագույն գումարային գնահատական ստացել է՝ «Պլազասիստեմս» ՓԲԸ-ն՝ 1.34, իսկ լավագույն գնահատական՝ Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա ԲԲԸ-ն՝ 49.49: Գործարարակապիտալությունն բաղադրիչի գծով վատագույն գումարային գնահատական ստացել է «Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ն՝ 6.39, իսկ լավագույն գնահատական՝ «Ունիվերսալ - օրդեր» ՍՊԸ-ն՝ 533.3: Շահութաբերությունն բաղադրիչի գծով վատագույն գումարային գնահատական ստացել է «Թամարան Անի» ՍՊԸ-ն՝ -0,641, իսկ լավագույն գնահատական՝ «Արմենիա Վայն» գործարան ՍՊԸ-ն՝ 2.075:

Երկրորդ քայլ. Վերոհիշյալ աղյուսակների տվյալներով կառուցել ենք գումարային գնահատականի հաշվարկման ռեգրեսիոն հավասարումներ, որոնց փոփոխականների կշռային գործակիցները որոշել ենք հետևյալ հաջորդականությամբ.

- Ելակետային ընդունված աղյուսակների տվյալներով կառուցել ենք ֆինանսական դրույթանյութաբանչյուր բաղադրիչի գծով համադրելի աղյուսակ՝ $\frac{A_{ij}}{A_{ij\text{միջին}}}$,
- Ըստ համադրելի աղյուսակների (տես թիվ 2.1.1 հավելվածում բերված աղյուսակները)՝ փոքրագույն քառակուսիների մեթոդով որոշել ենք գումարային գնահատականի հաշվարկման համար կիրառված փոփոխականների կշիռները, հաշվարկների համար կիրառվել է Excel ծրագրային փաթեթում կիրառվող ռեգրեսիոն վերլուծությունը: Կապիտալով բավարարողան բաղադրիչի գծով գումարային գնահատականի հաշվարկման հավասարումը, կշռային գործակիցները հաշվի առնելու դեպքում, կունենա հետևյալ տեսքը (հաշվարկման վերաբերյալ տվյալները ներկայացվել են թիվ 2.1.2.1 հավելվածի թիվ 2.1.2.1 աղյուսակում).

$$Y_{\text{գւ}} = 0.051 + 0.02 * Y_{\text{գւ}_1} + 0.507 * Y_{\text{գւ}_2} + 0.066 * Y_{\text{գւ}_3} + 0.356 * Y_{\text{գւ}_4}, \quad (2.1.1):$$

Վճարունակությունն բաղադրիչի գծով գումարային գնահատականի հաշվարկման հավասարումը, կշռային գործակիցները հաշվի առնելու դեպքում, կունենա հետևյալ տեսքը (հաշվարկման վերաբերյալ տվյալները ներկայացվել են թիվ 2.1.2.1 հավելվածի թիվ 2.1.2.2 աղյուսակում).

$$Y_{\text{ւճ}} = -0.0002 + 0.2143 * Y_{\text{ւճ}_1} + 0.1046 * Y_{\text{ւճ}_2} + 0.6813 * Y_{\text{ւճ}_3}, \quad (2.1.2)$$

Իրացվելիությունն բաղադրիչի գծով գումարային գնահատականի հաշվարկման հավասարումը, կշռային գործակիցները հաշվի առնելու դեպքում, կունենա հետևյալ տեսքը (հաշվարկման վերաբերյալ տվյալները ներկայացվել են թիվ 2.1.2.1 հավելվածի թիվ 2.1.2.3 աղյուսակում).

$$Y_{\text{ր}} = 0.00031 + 0.40333 * Y_{\text{ր}_1} + 0.05392 * Y_{\text{ր}_2} + 0.04998 * Y_{\text{ր}_3} + 0.49266 * Y_{\text{ր}_4}, \quad (2.1.3):$$

Գործարար ակտիվությունն բաղադրիչի գծով գումարային

գնահատականի հաշվարկման հավասարումը, կշռային գործակիցները հաշվի առնելու դեպքում, կունենա հետևյալ տեսքը (հաշվարկման վերաբերյալ տվյալները ներկայացվել են թիվ 2.1.2.1 հավելվածի թիվ 2.1.2.4 աղյուսակում)։

$$Y_{qu} = -0.0006 + 0.0094 * QU_1 - 0.0093 * QU_2 + 0.697 * QU_3 + 0.0138 * QU_4 + 0.2516 * QU_5 + 0.038 * QU_6, (2.1.4):$$

Շահութաբերությունն բաղադրիչի գծով գումարային գնահատականի հաշվարկման հավասարումը, կշռային գործակիցները հաշվի առնելու դեպքում կունենա հետևյալ տեսքը (հաշվարկման վերաբերյալ տվյալները ներկայացվել են թիվ 2.1.2.1 հավելվածի թիվ 2.1.2.5 աղյուսակում)։

$$Y_{cp} = 0.4286 * CF_1 - 0.605 * CF_2 + 1.1764 * CF_3, (2.1.2)$$

Կառուցված հավասարումներին համապատասխան ֆինանսական դրություն միջանկյալ և նախնական գնահատականների համեմատական վերլուծությունը ներկայացրել ենք մատրիցային մեթոդի հիման վրակառուցված թիվ 2.1.13 - 2.1.17 աղյուսակներում։

Աղյուսակ 2.1.13

Կապիտալ ով ապահովվածությունն բաղադրիչի գծով նախնական և միջանկյալ ֆինանսական վերահսկողության աղյուսակների համեմատականը

Կազմակերպություններ	Y _{qu}	Y _{qu} -ի ըստ 2.1.1 հավասարման	Շեղումը՝ 2-3
1	2	3	4
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա	1,561	0,3	1,261
«Վեդի ալ կո» ՓԲԸ	5,755	2,189	3,566
Երևանի Արարատկոնյ ակի-գինու կոմբինատ ԲԲԸ	13,776	5,861	7,915
Երևանի շամպայ և գինիների գործարան ԲԲԸ	3,031	1,026	2,005
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	2,154	0,537	1,617
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	11,974	4,867	7,107
«ԱրմենիաՎայն» Գործարան ՍՊԸ	max 62.874	max 29 max 29,342	33,532
«Ալ ֆաֆուդ սերվիս» ՍՊԸ	5,475	2,268	3,207
«ՊԼ ազասիստեմս» ՓԲԸ	-1,52	-1,346	-0,174
«Ունիվերսալ -Օրդեր» ՍՊԸ	-8,298	-4,744	-3,554
«Սիս նատուրալ» ՓԲԸ	3,014	0,951	2,063

«Թամարան Անի» ՍՊԸ	min - 11,677	min -6,128	-5,549
-------------------	-----------------	------------	--------

Աղյ ու սակ 2.1.14

Վճարող նակու թյ ու ն բաղադրիչ ի գծով նախնական և միջանկյ ալ ֆինանսական վերահսկողո թյ ան աղյ ու սակների համեմատականը

Կազմակերպու թյ ու ններ	Y ₄₆	Y ₄₆ -ն՝ ըստ 2.1.2 հավասարման	Ծեղու մը՝ 1-2
	1	2	3
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա	min	0,380	0,369
«Վեդի ալ կո» ՓԲԸ	2,277	0,864	1,413
Երևանի Արարատկոնյ ալի-գինու կոմբինատԲԲԸ	max 9,152	max 5,317	3,835
Երևանի շամպայ ն գինիների գործարան ԲԲԸ	2,959	1,456	1,503
Պռոշյ անի կոնյ ալի գործարան ՍՊԸ	7,067	4,643	2,424
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	2,796	1,026	1,770
«ԱրմենիաՎայ ն» Գործարան ՍՊԸ	1,937	min 0,310	1,627
«Ալ ֆաֆու դ սերվիս» ՍՊԸ	1,548	0,682	0,866
«Պլ ազասիստեմս» ՓԲԸ	4,476	3,031	1,445
«Ու նիվերսալ -օրդեր» ՍՊԸ	1,242	0,331	0,911
«Սիս նատուրալ» ՓԲԸ	4,209	2,404	1,805
«Թամարան Անի» ՍՊԸ	4,549	1,935	2,614

Աղյ ու սակ 2.1.15

Իրացվել ի ու թյ ու ն բաղադրիչ ի գծով նախնական և միջանկյ ալ ֆինանսական վերահսկողո թյ ան աղյ ու սակների համեմատականը

Կազմակերպու թյ ու ններ	Y _h	Y _h -ն ըստ 2.1.3 հավասարման	Ծեղու մը՝ 1-2
	1	2	3
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա	max	max 18,213	31,277
«Վեդի ալ կո» ՓԲԸ	5,3	2,39	2,91
Երևանի Արարատկոնյ ալի-գինու կոմբինատԲԲԸ	9,77	4,311	5,459
Երևանի շամպայ ն գինիների գործարան ԲԲԸ	5,02	2,282	2,738
Պռոշյ անի կոնյ ալի գործարան ՍՊԸ	10,42	4,549	5,871
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	21,98	9,744	12,236
«ԱրմենիաՎայ ն» Գործարան ՍՊԸ	3,13	1,397	1,733
«Ալ ֆաֆու դ սերվիս» ՍՊԸ	2,36	0,959	1,401
«Պլ ազասիստեմս» ՓԲԸ	min	min 0,524	0,816
«Ու նիվերսալ -օրդեր» ՍՊԸ	2,31	0,814	1,496
«Սիս նատուրալ» ՓԲԸ	7,9	3,663	4,237
«Թամարան Անի» ՍՊԸ	2,63	1,138	1,492

Այլ ուսակ 2.1.16

Գործարար ակտիվություն և բաղադրիչի գծով նախնական և միջանկյալ ֆինանսական վերահսկողություն և այլ ուսակների համեմատականը

Կազմակերպություններ	Y _{qu}	Y _{qu-n} ըստ 2.1.4 հավասարման	Ճեղուկ մը՝ 1-2
	1	2	3
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա ԲԲԸ	30,63	11,59	19,04
«Վեդի ալկո» ՓԲԸ	11,46	4,42	7,04
Երևանի Արարատկոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ	7,23	1,24	5,99
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ	min 6,39	min 1,14	5,25
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	9,68	2,98	6,7
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	9,9	2,95	6,95
«ԱրմենիաՎայն» գործարան ՍՊԸ	132,64	33,09	99,55
«Ալֆաֆոնդ սերվիս» ՍՊԸ	20,66	8,88	11,78
«Պլազասիստեմս» ՓԲԸ	34,91	8,03	26,88
«Ունիվերսալ-օրդեր» ՍՊԸ	max 533,33	max 370,53	162,8
«Սիսնատուրալ» ՓԲԸ	12,34	2,59	9,75
«Թամարան Անի» ՍՊԸ	14,78	6,44	8,34

Այլ ուսակ 2.1.17


Շահույթներ և բաղադրիչի գծով նախնական և միջանկյալ ֆինանսական վերահսկողություն և այլ ուսակների համեմատականը

Կազմակերպություններ	Y _{cp}	Y _{cp-n} ըստ 2.1.5 հավասարման	Ճեղուկ մը՝ 1-2
	1	2	3
Երևանի «ՎԱՆ» արտադրական ֆիրմա ԲԲԸ	0,188	0,146	0,042
«Վեդի ալկո» ՓԲԸ	0,065	0,17	-0,105
Երևանի Արարատկոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ	0,359	0,107	0,252
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ	0,009	-0,039	0,048
Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	0,239	0,104	0,135
Ավշարի գինու գործարան ՍՊԸ	0,27	0,037	0,233
«ԱրմենիաՎայն» գործարան ՍՊԸ	max 2,075	0,394	1,681
«Ալֆաֆոնդ սերվիս» ՍՊԸ	1,047	min -0,085	1,132
«Պլազասիստեմս» ՓԲԸ	-0,404	max 2,342	-2,746
«Ունիվերսալ-օրդեր» ՍՊԸ	-0,537	1,409	-1,946
«Սիսնատուրալ» ՓԲԸ	0,048	-0,013	0,061
«Թամարան Անի» ՍՊԸ	min -0,641	0,682	-1,323

Ֆինանսական դրույթան միջանկյալ գնահատականի արդյունքներով նախնական գնահատման արդյունքների նկատմամբ վերահսկողության առումով արձանագրում ենք հետևյալը.

- Կապիտալով ապահովվածության բաղադրիչի գծով միտումները պահպանվել են:
- Վճարունակությունն բաղադրիչի գծով լավագույն գնահատականով միտումը նույնն է, իսկ վատագույնի մասով փոխվել է՝ «ԱրմենիաՎայն» գործարան ՍՊԸ-ն՝ 0.310:
- Իրացվել իությունն բաղադրիչի գծով միտումները պահպանվել են:
- Գործարար ակտիվությունն բաղադրիչի գծով միտումները պահպանվել են:
- Ծահույթաբերությունն բաղադրիչ գծով պատկերն ամբողջությամբ փոխվել է: լավագույն գնահատական ստացել է «Պլազա սիստեմ» ՓԲԸ-ն՝ 2.342, իսկ վատագույն գնահատական՝ «Ալֆաֆուդ սերվիս» ՍՊԸ-ն՝ -0.085:

Միաժամանակ փաստենք, որ միջանկյալ ֆինանսական վերահսկողության աղյուսակում գումարային գնահատականի հաշվարկման համար կառուցված ռեգրեսիոն հավասարմամբ որոշված արդյունքները ավելի իրատեսական են ներկայացնում խմիչքների արտադրությամբ զբաղվող հետազոտված կազմակերպությունների դասակարգումը: Միջանկյալ ֆինանսական վերահսկողության աղյուսակի արդյունքներով ըստ ֆինանսական դրույթան բոլոր բաղադրիչների գումարային գնահատականի լավագույնը «Ունիսվերսալ օրդեր» ՍՊԸ-ն՝ 368.34, իսկ վատագույն գումարային գնահատական՝ «Թամարա և Անի» ՍՊԸ-ն՝ 4.067: Վերոնշյալի մասով համեմատական վերլուծությունը ներկայացվել է թիվ 2.1.1 գծապատկերում:




Գծապատկեր 2.1.1

Ջեոագրոտված կազմակերպությունների համեմատական գնահատականները՝ ըստ միջանկյալ ֆինանսական վերահսկողության և աղյուսակի արդյունքների

Երրորդ քայլ. Կառուցել ենք կազմակերպության ֆինանսական վիճակի ընդհանրացված վերջնական գնահատականի հաշվարկման ռեգրեսիոն հավասարում, որը մեր կողմից կատարված հաշվարկների հիման վրա վերջնարդյունքում ստացել է հետևյալ տեսքը (հաշվարկման համար կիրառվել են 2.1.1-2.1.5 ռեգրեսիոն հավասարումներով որոշված ֆինանսական դրուժյան հինգ բաղադրիչների միջանկյալ ֆինանսական վերահսկողության աղյուսակի կազմման հիմքում կիրառված գումարային գնահատականները, որոնք դարձվել են միջին արժեքների հիման վրա համադրելի (տես հավելված 2.1.3), այնուհետև դրանց հիման վրա excel ծրագրային փաթեթի ռեգրեսիոն վերլուծությամբ որոշվել են (2.1.6) ռեգրեսիոն հավասարման ֆինանսական դրուժյան բաղադրիչների կշռային ազդեցությունները, տվյալները ներկայացվել են թիվ 2.1.4 հավելվածում)։

$$Y_{գումար} = 0.0614 * Y_{գու} + 0.0395 * Y_{գե} + 0.0883 * Y_{դ} + 0.8015 * Y_{գու} + 0.0093 * Y_{գբ} \quad (2.1.6)$$

Կառուցված (2.1.6) ռեգրեսիոն հավասարման միջոցով հաշվարկել ենք ինտեգրացված կազմակերպությունների ֆինանսական վիճակի ամփոփ գնահատականները, որոնք ներկայացրել ենք ստորև բերված թիվ 2.1.2 գծապատկերում։



Գծապատկեր 2.1.3

Ֆինանսական դրուժյան ամփոփգնահատականները և դասակարգման արդյունքները

Ֆինանսական դրուժյան ամփոփիչ գնահատականի արդյունքներով հետազոտված խմիչքի արտադրության կազմակերպության ներքին լավագույնը համարվել է «Ունիվերսալ օրդեր» ՍՊԸ-ն՝ 296.79 միավոր, իսկ վատագույնը՝ «Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ն՝ 1.235 միավոր:

Ֆինանսական դրուժյան ամփոփիչ գնահատականի արդյունքներով եզրահանգել ենք հետևյալը.

- Ամենաբարձր ազդեցությունն դրսևորող գործոն է տարբերակվել «գործարար ակտիվություն» բաղադրիչը, որի համար վերջնական գործարային գնահատականի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.8015:
- Որպես երկրորդ կարևոր գործոն է տարբերակվել «իրացվելիություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.0883:
- Երրորդ գործոն է տարբերակվել «կապիտալով ապահովվածություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.0614:
- Չորրորդ գործոն է տարբերակվել «վճարունակություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ադեցությունը կազմել է 0.0395:

- Ամենացածր ազդեցությունը ունի դրսևորող գործուն է տարբերակվել «շահութաբերություն» բաղադրիչը, որի համար հաշվարկված կշռային ազդեցությունը կազմել է 0.0093:

Փաստորեն հետազոտված կազմակերպությունների ամփոփիչ գնահատականի մեծությունն անմիջականորեն կախված է կապիտալի անհրաժեշտ ծավալ ներգրավելու, կապիտալի օպտիմալ կառուցվածք ձևավորելու խնդրին ցուցաբերվող համարժեք լուծումներից, միջոցները շահութաբեր նախագծերում ներդնելուց, ինչպես նաև վճարունակության ու շահութաբերության բարձրացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումից ու բավարար ծավալի իրացվելի միջոցներ կուտակելու կարողությունից:

Հիմք ընդունելով վերլուծության արդյունքները հետազոտված խմբի քննարկության կազմակերպությունների համար կատարել ենք հետևյալ եզրահանգումներն ու առաջարկները..

- ՀՀ խմբի քննարկության զարգացման համար առաջնային լուծման ենթակա խնդիր ենք համարում բարձրակ և միջազգայնորեն մրցունակ արտադրանքի թողարկումը, ԵԱՏՄ շուկաներում վաճառքի ծավալների աճը, քանի որ հետազոտված կազմակերպություններն ունեն արտադրական բարձր ներուժ, սակայն միջոցների տեղաբաշխումը դրանցում դեռևս օպտիմալ չէ, պետք է հետազոտված կազմակերպությունները փորձեն բարելավել գործարար ակտիվությունը՝ ապահովելով դրամական հոսքերի խիստ անհրաժեշտների հոսքերը:
- Հանրապետությունում կոնյակի և գինու արտադրության ծավալների ավելացման համար հատուկ ուշադրություն պետք է դարձնել խաղողագործության զարգացմանը, կարևորելով նոր սորտերի մշակումը: Դրա իրականացումը կախանա Ֆինանսավորման նոր մեխանիզմների կիրառում և կլուծի հետազոտված կազմակերպություններում առկա հեռանկարային իրացվելիության կարգավորման խնդիրը, ինչն էլ կբարձրացնի գործընկերային հարաբերություններում դրանց նկատմամբ վստահությունը:
- Ֆինանսական կայունության բարձրացման նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ է ավելացնել սեփական կապիտալի հաստատուն մասը, քանի որ շահույթի աճի տեմպը հայրենական

Կազմակերպություններում բարձր է:

2.2. Ֆինանսական կայունության ներքին վերահսկողության համեմատական վելուծության ունը

Արտադրական կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատականը կարևոր նշանակություն ունի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շահառուների համար⁹⁴: Մասնագիտական գրականության մեջ վարկանշային գնահատման մոտեցումները մեծ մասամբ մեկնաբանվում և առաջարկվում են փոխառուի վարկունակության գնահատման նպատակով⁹⁵: Արևմտյան հետազոտողների կողմից վարկանշման մոտեցումներ են առաջարկվել նաև ռեգրեսիոն հավասարումների միջոցով⁹⁶:

Արտադրական կազմակերպությունների ֆինանսական վիճակի և սնանկացման հավանական վտանգի վարկանշման գնահատման համակարգի մշակումը պահանջում է մի քանի փուլերով որոշակի աշխատանքների իրականացում: Ի դեպ, աշխատանքների յուրաքանչյուր փուլ նախատեսում է իրականացման մի քանի տարբերակներ, ինչն էլ պայմանավորում է գործնականում կիրառվող վարկանշման տարաբնույթ մոտեցումների օգտագործումը: Ամբողջական առումով տարբերակվում են չորս փուլեր:

Առաջին փուլում անհրաժեշտ է որոշել գնահատող ցուցանիշների համախմբերը:

Երկրորդ փուլում հստակեցվում են ֆինանսական վիճակի ախտորոշման մեթոդաբանական տարբերակները.

- Ցուցանիշների նորմատիվային նշանակությունների սահմանում,
- Ցուցանիշների փոփոխության թույլ ատրելի միջակայքերի որոշում,
- Ցուցանիշների փոփոխության թույլ ատրելի միտումների որոշումը,
- Համակցված մոտեցում, որը հաշվի է առնում առանձին

⁹⁴ Анализ хозяйственной деятельности предприятия. Савицкая Г.В. 5-е изд., перераб. и доп. - М.: Инфра-М, 2009. 536 с. Бердникова, Т.Б. Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности предприятия/Т.Б. Бердникова.- М. Инфра-М 2005. с. 204. Ендовицкий, Д.А. Анализ и оценка кредитоспособности: заемщика Учебно-практ. пособие/ Д. А. Ендовицкий, И. В. Бочарова.- М.- Прогресс,- 2005. 272 с.

⁹⁵Ендовицкий, Д.А. Анализ и оценка кредитоспособности: заемщика Учебно-практ. пособие/ Д. А. Ендовицкий, И. В. Бочарова.- М.- Прогресс,- 2005. 272 с.

⁹⁶Altman E.I. Further Empirical Investigation of the Bankruptcy Cost Question //Journal of Finance, September 1984, pp. 1077 – 1082. Core Principles Methodology, Basel, Switzerland, October 2006, 54 p,

ցուցանիշների անհատական առանձնահատկությունները:

Վարկանշման գնահատման աշխատանքների երրորդ փուլում անհրաժեշտ է որոշել ֆինանսական վիճակի դասերի քանակը, որոնց համապատասխան էլ կատարվում է դասակարգում:

Չորրորդ փուլում հարկ է լինում տարբերակել գնահատող ցուցանիշների բնութագրություններին համապատասխան կազմակերպության ֆինանսական վիճակի դասը:

Ժամանակի պահանջներին համահունչ մշակվել և գործնականում կիրառվել են կազմակերպությունների ֆինանսական անկայուն վիճակը կանխատեսող մոտեցումներ, որոնցում իրենց նշանակություն ամբ առանձնացվում են վարկանշման գնահատման մեթոդները: Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից տարանջատված խնդիրներից մեկը կապվում է վարկանշման մոտեցումների համեմատական վերլուծությանը և, մասնավորապես խիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների վարկանշման համեմատական վերլուծությանը:

Կիրառվող տեսագործական մոտեցումներից առաջին քայլում մեր կողմից էական նշանակություն է ստվել Դ.Դյուրանի մոտեցմանը⁹⁷, որի միջոցով երկարաժամկետ հեռանկարում ֆինանսական կայունությունը որոշելու և սնանկացման հավանական վտանգը կանխատեսելու համար իրականացվում է կազմակերպության վճարունակություն վերլուծություն: Դյուրանի մոտեցմամբ ճեպընթաց վերլուծության միջոցով որոշվում է ֆինանսական կայունության գումարային (ինտեգրալային) գնահատականը: Դ.Դյուրանի մոտեցմամբ ոչ պարզաբան խիչքներ արտադրող ՀՀ կազմակերպությունների համար ստացված արդյունքները ներկայացվել է ստորև բերված թիվ 2.2.1 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.1

Ոչ պարզաբան խիչքներ արտադրող ՀՀ կազմակերպությունների համար

Դ. Դյուրանի մոտեցմամբ ստացված արդյունքները

Ցուցանիշը	Ալֆաֆոնդ Սերվիս ՄՊԸ	ՊլազաՍիս-տեմս ՓԲԸ	Ղևիվերսալ-Օրդեր ՄՊԸ	Սիսնատուրալ ՓԲԸ	Ջերմուկ գրուպ ՓԲԸ	Թամարան Անի ՍՊԸ
------------------	----------------------------	--------------------------	----------------------------	------------------------	--------------------------	------------------------

⁹⁷Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / <http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html> (дата доступа 07.04.2013).

	Փաստացի մակարդակ	Տրվող բավ. 0	Փաստացի մակարդակ	Տրվող բավ. 0	Փաստացի մակարդակ	Տրվող բավ. 0	Փաստացի մակարդակ	Տրվող բավ. 0	Փաստացի մակարդակ	Տրվող բավ. 0	Փաստացի մակարդակ	Տրվող բավ. 0
Ակտիվների շահույթաբերություն, %	19.01	34.9	119,5	50	15.5	27.2	15.1	26.5	37,38	50	41,2	50
Ընթացիկ իրացվելիություն գործակից	1.89	28.4	0.52	0	0.903	0	5.64	30	1,85	27.79	1,41	10
Ինքնավարություն գործակից	0.21	1	-0.35	0	-0.11	0	0.516	14.7	0,03	0	-0,095	0
Դատերի խմբերը և սահմանային միջակայքերը	3-րդ դաս	64.3	3-րդ դաս	50	5-րդ դաս	27.2	2-րդ դաս	71.2	2-րդ դաս	77.79	3-րդ դաս	60

Ամփոփելով թիվ 2.2.1 աղյուսակի արդյունքները կարող ենք նշել, որ հետազոտված ոչ ակտիվային խմբերը արտադրող կազմակերպություններից՝ ըստ Դ.Դյուրանի մոտեցման, վճարունակության բաղադրիչից կախված, ֆինանսական կայունության երկրորդ դաս է շնորհվել «Սիս Նատուրալ» ՓԲԸ-ին և «Զերմուկ Գրուպ» ՓԲԸ-ին, կայունության երրորդ դաս են ստացել «Ալ ֆա ֆուդ Սերվիս» ՍՊԸ-ն, «Պլազա սիստեմս» ՓԲԸ-ն և «Թամարա և Անի» ՍՊԸ-ն: Կայունության հինգերորդ դաս է ստացել «Ունիվերսալ օրդեր» ՍՊԸ-ն: Չնայած, Դ. Դյուրանի մոտեցումը հիմնված է երեք ցուցանիշների վրա, այնուամենայնիվ ստացված հետազոտական արդյունքները ֆինանսական կայունության տեսանկյունից հուսադրող չեն, ինչից հետևում է, որ ոչ ակտիվային խմբերը արտադրող հետազոտված հայրենական կազմակերպություններում առկա է ֆինանսական կայունության բարելավման հիմնախնդիր, որն անմիջականորեն պայմանավորված է նաև այդ ուղղությամբ ներքին վերահսկողության արդյունավետ մեխանիզմների բացակայությամբ:

Ինչ վերաբերում է ակտիվային խմբերը արտադրող հետազոտված հայրենական կազմակերպությունների վերաբերյալ Դ. Դյուրանի մոտեցմամբ ստացված արդյունքներին, ապա դրանք ներկայացվել են թիվ 2.2.2 աղյուսակում:

Թիվ 2.2.2 աղյուսակի տվյալներից հետևում է, որ հետազոտված ակտիվային խմբերը արտադրող կազմակերպություններից՝ ըստ Դ. Դյուրանի մոտեցման, վճարունակության բաղադրիչից կախված, ֆինանսական կայունության երկրորդ դաս է շնորհվել Երևանի «Վան» արտադրական ֆիրմա ԲԲԸ-ին և Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ-ին, կայունության երրորդ դաս են ստացել «Վեդի ալկո» ՓԲԸ-ն, Երևանի

Արարատ կոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ-ն, Երևանի շամպայ և գինիների գործարան ԲԲԸ-ն և Ավշարի գինու գործարան ՍՊԸ -ն: Կայ ու նույն ժամանակ չորրորդ դաս է ստացել «Արմենիա վայ և» գործարան ՍՊԸ-ն: Վերլուծության արդյունքներից հետևում է, որ վճարունակության բաղադրիչը ֆինանսական կայունության ապահովման առումով դրական է ազդել, ըստ էության, Երևանի «Վան» արտադրական ֆիրմա ԲԲԸ-ի և Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ-ի համար, միջին ազդեցություն է դրսևորել 3-րդ դաս ստացած կազմակերպությունների համար, և բացասաբար է անդրադարձել «Արմենիա վայ և» գործարան ՍՊԸ-ի համար:

Այլ ուսակ 2.2.2

Ալ կոհոլային խմիչքներ արտադրող 33 կազմակերպությունների համար

Դ. Դյունրանի մոտեցմամբ ստացված արդյունքները

Ցուցանիշը	Երևանի ՎԱՆ արտադրական ֆիրմա ԲԲԸ		Վեդի Ալկո ՓԲԸ		Երևանի Արարատ կոնյակի-գինու կոմբինատ ԲԲԸ		Երևանի Շամպայ և գինիների գործարան ԲԲԸ		Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ		Ավշարի գինու գործարան ՍՊԸ		Արմենիա Վայ և գործարան ՍՊԸ	
	Փաստացի մակարդակը	Տրվող բաժնի	Փաստացի մակարդակը	Տրվող բաժնի	Փաստացի մակարդակը	Տրվող բաժնի	Փաստացի մակարդակը	Տրվող բաժնի	Փաստացի մակարդակը	Տրվող բաժնի	Փաստացի մակարդակը	Տրվող բաժնի	Փաստացի մակարդակը	Տրվող բաժնի
Ակտիվների շահույթաբերությունը, %	9,21	18,5	12,97	22,74	10,76	18,87	6,18	12,42	14,96	26,23	5,22	10,49	2,57	5,16
Ընթացիկ իրացվելիության գործակից	19,93	30	3,05	30	5,43	30	2,96	30	6,01	30	11,26	30	1,56	23,4
Ինքնավարության գործակից	0,87	20	0,28	4,82	0,11	0	0,42	9,44	0,77	20	0,15	0	0,02	0
Դասերի խմբերը և սահմանային միջակայքերը	2-րդ դաս	68,5	3-րդ դաս	57,56	3-րդ դաս	48,87	3-րդ դաս	51,86	2-րդ դաս	76,23	3-րդ դաս	40,49	4-րդ դաս	28,59

Համեմատական վերլուծության առաջին քայլում արձանագրում ենք, որ հայրենական ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչքներ արտադրող հետազոտված կազմակերպությունների ֆինանսական

կայ ու նույն ժամանակվա վճարումն ապահովելու և բաղադրիչը դրսևորել է որպես էական ազդեցություն և ցուցաբերած գործոն, ինչը և անհրաժեշտ է հաշվի առնել ներքին վերահսկողության սցենարները մշակելիս:


Համեմատական վերլուծության առաջին փայլումը նպատակահարմար ենք համարել ֆինանսական կայունության ներքին վերահսկողության կատարելագործման նոր մոտեցում մշակելու առումով հետազոտել նաև Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի 2009-2015թթ. ընկած ժամանակահատվածը: Մասնավորապես, Դ Դյուրանի մոտեցմամբ ստացված արդյունքներն այս կազմակերպության համար ներկայացվել են թիվ 2.2.3 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.3-ի տվյալներից հետևում է, որ Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ն, որպես ճյուղի առաջատար կազմակերպություններից, հետազոտված ժամանակահատվածում դրսևորել է ֆինանսական կայունության կայուն վարքագիծ, ինչի վկայությունն է բացառությամբ 2009թ., կայունության 3-րդ դասի դրսևորումը:

Աղյուսակ 2.2.3
Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի համար Դ. Դյուրանի մոտեցմամբ ստացված արդյունքները

Ցուցանիշը	2009		2010		2011		2012		2013		2014		2015	
	Փաստացի մակարդակը	Տրվող բաժ	Փաստացի մակարդակը	Տրվող բաժ	Փաստացի մակարդակը	Տրվող բաժ	Փաստացի մակարդակը	Տրվող բաժ	Փաստացի մակարդակը	Տրվող բաժ	Փաստացի մակարդակը	Տրվող բաժ	Փաստացի մակարդակը	Տրվող բաժ
Ակտիվների շահույթաբերություն, %	15,99	28	3,86	7,75	9,31	18,71	9,07	18,23	9,03	18,15	10,18	20	6,18	12,42
Ընթացիկ իրացվելիության գործակից	3,54	30	2,50	30	2,90	30	2,97	30	3,30	30	2,37	30	2,96	30
Ինքնավարության գործակից	0,77	20	0,33	7,4	0,36	8,1	0,36	8,1	0,41	9,2	0,40	8,99	0,42	9,44
Դասերի խմբերը և սահմանային միջակայքերը	2-րդ դաս	78	3-րդ դաս	45,15	3-րդ դաս	56,81	3-րդ դաս	56,33	3-րդ դաս	57,35	3-րդ դաս	58,99	3-րդ դաս	51,86

Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ 2009-2015թթ. ընկած ժամանակահատվածում կազմակերպությունն իր գործունեության վրակրել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, դրանով պայմանավորված 2009թ. մարտին և 2014թ. դեկտեմբերին ՀՀ դրամի արժեզրկման հետևանքները, որոնք ֆինանսական կայունության վրա ունեցել են խիստ բացասական ազդեցություն: Այս կազմակերպության վերաբերյալ արձանագրված միտումները փաստում են, որ, ըստ կիրառված երեք ցուցանիշների, կազմակերպությունում վճարունակությունն բաղադրիչից կախված՝ ֆինանսական կայունության ներքին վերահսկողությունը գտնվել է բավարար մակարդակում, առանց որի հնարավոր չէ ապահովել ֆինանսական կայունության հաստատուն վարքագիծ: Ինչ վերաբերում է, Դ.Դյուրանի մոտեցմամբ այս կազմակերպության համար ստացված արդյունքների, մաթեմատիկական տրենդով որոշված գնահատականներին, ապա դրանք ներկայացվել են թիվ 2.2.1 գծապատկերում:



Գծապատկեր 2.2.1 Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի համար Դ.Դյուրանի մոտեցմամբ ստացված գնահատականների մաթեմատիկական տրենդը

Գծապատկեր 2.2.1-ից հետևում է, որ վճարունակության բաղադրիչից կախված՝ ֆինանսական կայունության բարելավման միջոցառումներ ձեռնարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել մաթեմատիկական տրենդի գնահատականներով և ավագույն տարբերակված 2009 և 2014թթ.: Եականն այստեղ համարում ենք այն հանգամանքը, որ 2009 և 2014թթ.-ից հետո ՀՀ տնտեսության մեջ դրսևորվել են ճգնաժամային միտումներ, տեղի է ունեցել ՀՀ դրամի արժեզրկում, ինչ էլ ազդել է Երևանի շամպայն

գիտելների գործարան ԲԲԸ-ի վճարունակության, ինչպես նաև ֆինանսական կայունության ընդհանուր վիճակի վրա:

Ֆինանսական կայունության վարկանշման համեմատական վերլուծությունն իրականացնելու նպատակով երկրորդ քայլում կիրառել ենք Լ.Դանցովայի և Ն.Նիկիֆորովայի մոտեցումը, ըստ որի ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող հայրենական կազմակերպությունների համար ստացված արդյունքները ներկայացվել են աղյուսակ 2.2.4-ում:

Թիվ 2.2.4 աղյուսակի տվյալներով վերահաստատվում են այն օրինաչափությունները, որոնք ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող ՀՀ կազմակերպությունների համար ստացվել են Դ.Դյուրանի մոտեցմամբ: Կրկին ֆինանսական կայունության տեսանկյունից շահավետ դիրքում է «Սիս Նատուրալ» ՓԲԸ-ն՝ վերագրվելով երկրորդ դասին: Մյուս կազմակերպություններում, ֆինանսական կայունության վիճակից ելնելով տրվել է կայունության հինգերորդ դաս: Փաստորեն, Լ.Դանցովայի և Ն.Նիկիֆորովայի գումարային բալային գնահատման մոտեցմամբ ստացված արդյունքներով ավելի խորացվեց հետազոտված հայրենական ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող կազմակերպություններում ֆինանսական կայունության թույլ վերահսկողության բարդույթը, որը հաստատվել է նաև թիվ 2.2.2 գծապատկերում բերված մաթեմատիկական տրենդի գնահատականներով: Լավագույն փորձ արձանագրվել է «Սիս Նատուրալ» ՓԲԸ-ում:

Աղյուսակ 2.2.4


Ոչ ալկոհոլային խմիչքներ արտադրող ՀՀ կազմակերպությունների համար

Լ. Դանցովայի և Ն.Նիկիֆորովայի մոտեցմամբ ստացված արդյունքները⁹⁸

Ցուցանիշը	Ալ ֆա ֆուդ		Պլ ազա Սիստեմս		Ղևիվերսալ -Օրդեր ՍՊԸ		Սիս Նատուրալ		Ջերմուկ ԳրուպՓԲԸ		Թամարան Անի ՍՊԸ	
	Փաստացի միլիարդ	Սթյուդիո	Փաստացի միլիարդ	Սթյուդիո	Փաստացի միլիարդ	Սթյուդիո	Փաստացի միլիարդ	Սթյուդիո	Փաստացի միլիարդ	Սթյուդիո	Փաստացի միլիարդ	Սթյուդիո

⁹⁸ Հետազոտության ընթացքում հաշվարկների համար կիրառվել են ընտրված կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվություններից և առևդիտորական եզրակացություններից վերցված 2015 թ. տվյալները:

Բացարձակ իրացվել իրության գործակից	0.119	4	0.3	12	0.088	4	0.042	16	0,07	4	0,009	4
